

Հայաստանի մէջ Իրանի դեսպան Մոհամադ Ֆարհատ Քոլէյնի յայտնեց, որ հայ եւ իրանցի մասնագէտներ թեւակոխած են Իրան - Հայաստան կապարարի կառուցման մասին համաձայնագրին կնքման բանակցութիւններու վերջին փուլը: Իրանցի դեսպանը ըսաւ, որ նախագիծին իրագործման ծրագիրը մշակւած է: Քոլէյնի նշեց, որ ֆինանսական հարցեր չկան: Ան ըսաւ, որ կապարարին աշխատանքները կրնան կատարուիլ երեք փուլի մէջ եւ կապը կրնայ մատակարարուիլ ուղղակիօրէն: Ան ըսաւ, որ կապի գինը պիտի ճշդուի բանակցութիւններու ընթացքին:

ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ԺՈՂՈՎԸ

Նախարարաց խորհուրդը երէկ գումարեց իր հերթական ժողովը, զիտարուեցան զանազան խնդիրներու նախագահ Գոր. Էմիլ Լահուտի եւ ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Ժողովէն ետք տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի յայտարարեց, որ նախարարներ Ֆուատ Սաստի եւ Թալալ Արսլանի բացակայութեան գումարուած այս ժողովին լացուած կատարելով զանազան խնդիրներու նախագահը շնորհաւորեց Ծննդեան Ֆիթրի եւ Ամանորի տօները, նկատել տալով որ այս տօները միեւնոյն օրերուն գուցադիպելը բախտաւոր գուցադիպութիւն է:

Շար.ը՝ էջ 10

ՊՈՒՐԸ ՀԱՄՈՒՏԻ ԲԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԸ

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԿԱՂԱՆԴԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ



Լիբանանեան քայլերգի ունկնդրութեան պահուն: (Լուսանկարները՝ Պ. ՇԱՌՈՒԿԵԱՆԻ)



Կաղանդ Պապան Զաղաքապետարանի դաշտին մէջ:

Չորեքշաբթի, 20 Դեկտեմբերի առաւօտեան ժամը 10:00ին, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին մէջ տեղի ունեցաւ շրջանի աշակերտութեան համար Պուրճ Համուտի Քաղաքապետութեան կողմէ կազմակերպուած Կաղանդի տօնակատարութիւնը: Ներկայ էին Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիեան, քաղաքապետութեան անդամներ եւ Պուրճ Համուտի հայկական եւ արաբական քաներեք նախակրթարաններու շուրջ հինգ հազար աշակերտներ:

Տօնակատարութիւնը սկսաւ Լիբանանեան քայլերգի ունկնդրութեամբ, որմէ ետք Պուրճ Համուտի Քաղաքապետութեան անունով խօսք առին Քաղաքապետական հորհուրդի անդամներ Նեյլի Վեքիլեան (հայերէնով) եւ մեթր Ասատ Սալէի (արաբերէնով): Անոնք յայտնեցին, որ Կաղանդի տօնակատարութեամբ Պուրճ Համուտի Քաղաքապետութիւնը, հասկնալով աշակերտութեան ապրած դժուարին պայմանները,

Շար.ը՝ էջ 10

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԱՅ ԱՄԻՆ ԺԵՄԱՅԵԼԻ

Երէկ առաւօտեան ժամը 10:00ին Հ. Յ. Լիբանանի կեդրոնական կոմիտէի ներկայացուող պատուիրակութիւն մը, բարի գալուստի այցելութիւն մը տուաւ Լիբանանի նախկին նախագահ Ամին ժեմայիլի: Անդրադառնալէ ետք Փաղանգաւոր կուսակցութեան ու Հ. Յ. Դաշնակցութեան միջեւ պատմական յարաբերութիւններուն մասին, բարձր գնահատուեցան այն ձիգերը, զորս նախկին նախագահը կը ցուցաբերէ Փաղանգաւոր կուսակցութեան միատրաման ու ներքին մթնոլորտի բիւրեղացման գծով: Խորհրդակցութեան ընթացքին քննարկուեցաւ երկրի այժմու իրավիճակը եւ շեշտը դրուեցաւ Լիբանանեան քաղաքական մեկարդակի տագնապները երկխօսութեան ճամբով լուծելու հրամայականին վրայ:

ՄԻՆՉ ՈՒՄԸՆԿԵԹՆԻ ՄԷՁ ՊԱՂԵՍՏԻՆՅՈՒՆԻ ԻՐԱՐԱՅԷԼԱՅԻ ԲԱՆԱԳԱՆՅՆԵՐԸ ԿԸ ՓՈՐՁԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԿԱԶԱՅԻ ԵՒ ԱՅՈՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՁ, ԽԼԵԼՈՎ ՆՈՐ ԶՈՇԵՐ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսատ Արաֆատը ամերիկեան նախաձեռնութիւնը թափ տալով, որ ան կ'ակնաւահարէ իսրայէլու ղեկավարութեան քաղաքականութեան վերականգնելու ամերիկեան նախաձեռնութիւնը մէջ հանդիպումներ կ'ունենային ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատարներու հետ, Իսրայէլի մէջ նախկին վարչապետ Շիմոն Փերէս կը պատրաստուէր վարչապետ Էհուտ Պարաշին:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայկական երեսփոխանական պլոքը կը տեղեկացնէ, որ ազգային պաշտպանութեան նախարարութիւնը կարիքը ունի սպայ թիւղներու, երաժիշտներու եւ գործավարներու: Պլոքը զիմուամնազիրներ կ'ընդունի, իր գրասենեակին մէջ, Շաղապեան կեդրոն, Պուրճ Համուտ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Թեկնածուն պէտք է ըլլայ:
 - Ա.- Լիբանանցի՝ աւելի քան 10 տարիէ ի վեր:
 - Բ.- Ունենայ քաղաքացիական բոլոր իրաւունքները եւ վեց ամիսէն աւելի լրանտարկութեան դատապարտւած չըլլայ:
 - Գ.- Լաւ վարք ու բարք ունենայ:
- Ան պատրաստ պէտք է ըլլայ ստորագրելու զինուորագրման պայմանագրութիւնը եւ ընդունման պարագային վերջ դնելու որեւէ կուսակցութեան, միութեան կամ սենտիքայի իր անդամակցութեան կամ կապին:

Շար.ը՝ էջ 3

ՆԱԽԿԻՆ ԵՐԵՄՓՈՒՆԱՆ ԱՐԱ ԵՐԵՄԵՆԵԱՆԻ ՄԱՀՈՒՄԱՆ ԱՌԻԹՈՎ

ՅԱԲԱՅԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Զ. Յ. Դ. ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԱՎՈՒՄԲԻՆ ՄԷՁ

Երէկ, կէսօրէ ետք ժամը 15:00էն 21:00, Հ. Յ. Դ. Սարգսյան պատկանութիւն մէջ Հ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէի եւ հայկական երեսփոխանական պլոքը, ինչպէս նաեւ Շահէ, Վահէ եւ Սերժ Երեւանեաններ ցաւակցութիւն ընդունեցին նախկին երեսփոխան Արա Երեւանեանի մահուան առիթով:



Իրենց ցաւակցութիւնները յայտնեցին երեսփոխաններ Միշէլ Մրր, Էլիաս Սքաֆ, Նատէր Սուքքար, Նիքոլա Ֆաթթուշ, նախկին նախարարներ Արթուր Նապարեան, Ատնէ Թրապուլի, Ժաք Չուխատարեան, նախկին երեսփոխաններ Մելգոն Էպիղաթեան, Արա Կարապետեան, Նուրիդան Տեմիրճեան, Անդրանիկ Մանուկեան, Անտրէ Թապուրեան:

Շար.ը՝ էջ 10

ԿԱՂԱՆԴԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ

ՀԱՅԱՏՈՐ ԹԱՎԵՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ 25ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱՏ «ԱԶԳԱԿ» ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ



Պատմական - վկայակոչական ընդլթի գիրք մը, որ կը ներկայացնէ 1975-1990 լիբանանահայութեան ինքնապաշտպանութեան առօրեան իր զանազան երեսներով: 416 էջ, 11 գլուխ:

- Ազգային եւ քաղաքական փորձառութիւններ
- Արժեւորումներ
- Պատմութեան համար
- Վկայութիւններ եւ վերլուծումներ
- Ուղեւոր կը յիշենք...
- Յիշատակելիները
- Հ. Յ. Դ. եւ հայութեան դէմ ոճիրներ
- Հայրենական արձագանգներ
- Սփիւռքեան արձագանգներ
- Հին օրերու վկայութիւններ նոր օրերու համար
- Թիկունքի աշխատանքները

Ստանալ «Ազգային»ի ցրուելիներէն եւ Հետեւեալ գրախանութիւններէն. — «Համազգային», «Նարեկացի», «Ոսկեղար», «Ուրֆայեան», «Obelisk», «Կոմիտաս», «Շիրակ» եւ «SAVA» (Այնճար): Սակ՝ 15,000 Լ. Ի.:

ՆԱԽԱՐԱՐ ՍԵՐՓ ՍԱՐԳՍԵԱՆ ՄԵԿՆԵՑԱԻ ՄՈՍԿՈՒԱ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան երէկ Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան անդամ երկիրներու պաշտպանութեան նախարարներու խորհուրդի նիստին մասնակցելու համար Մոսկուա մեկնեցաւ:

Հանդիպումին պիտի քննարկուին ԱՊՀ-ի շրջագիծին մէջ զինուորական գործակցութեան, մինչեւ 2005 ԱՊՀ-ի անդամ պետութիւններու «զինուորական գործակցութեան հեռանկարային զարգացման ծրագրի» նախագիծին առնչուող հարցեր:

Ս. Սարգսեան պիտի մասնակցի նաեւ միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարին վերաբերեալ միջազգային խորհրդաժողովին:

Միւս կողմէ, Սերժ Սարգսեան անդրադառնալով ազգայնացի իր պաշտօնակից Սաֆար Ապիւեւի հետ 15 Դեկտեմբերի հանդիպումին ըսաւ, որ համաձայնած են քայլերու զիմել՝ սահմանային միջազգային մեղմացնելու ուղղութեամբ:

Նախարար Սարգսեան ըսաւ, որ ներկայիս կողմերէն ոչ մէկը պիտի ակնազբծէ իր սահմանային շրջանները: Ան ըսաւ, որ նախարարութիւնը շուտով տուեալներ կը հրատարակէ պատերազմի եւ զինադուլի ընթացքին սպաննուած զինուորներու մասին: Նախարար Սարգսեան նկատել տուաւ, որ վրաստանի ուսուսական խարխիւներէն ուսուսական զէնքերու Հայաստան տեղափոխումը կը համապատասխանէ Եւրոպայի մէջ աւանդական ուժերու համաձայնագրին եւ այդ հարցը կը վերաբերի միայն Ռուսիոյ եւ Հայաստանին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԽԱՆՈՒԹԻ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ ԵՒ ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԶՈՅԳ ԱՌԻԹՆԵՐՈՎ

15% 25% 35% 70%

ԳԻՐՔԵՐՈՒ ԲԱՅԱՌԻԿ ԶԵՂՉ ՎԱՃԱՌՔ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2000ԸՆ 18 ՅՈՒՆԻՒԼՐ 2001

- ՅԱՏՈՒԿ ԳԻՐԵՐ
- ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԶԵՂՉԱՐՁԱԿՄԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՄԱՆ
- ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
- ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
- ՄԱՍԿՈՒԼԱՆ ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ՕԳՏՈՒԷ ԱՅՍ ԲԱՅԱՌԻԿ ԱՌԻԹԵՆ ՏՕՆԱԿԱՆ ԱՅՍ ՕՐԵՐՈՒՆ ՓՈՔՐ ԳՈՒՄԱՐՈՎ ՄԵՃԱՐԺԷՔ ԳԻՐՔԵՐ ՆՈՒԹԵՐՈՎ ԸՆԹԵՅԱՄԵՐ ՄԵՃ ՈՒ ՓՈՔՐ ԲԱՐԵՎԱՆԵՐՈՒԹԻՒՆ:

ԲԱՅԱՌԻԿ ԶԵՂՉԻ ԺԱՄԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԽԱՆՈՒԹԻ ԲԱՅ ԿԸ ՄԱՅՍ ՄԱՅԻՆ ԵՐԵՄԵՆԵԱՆ ԺԱՄՆԸ 8:00, ՆԵՐԱՅԵՄԸ ԿՐԱՎԻ ՕՐԵՐԸ: ՀԱՄԱՑ ԸՂԱՅՈՒՆԵՆ ԿԵՐԱՆ, ՊՈՒՐՅ ՀԱՄՈՒՏ, ՀՅՈ. (ՈՒ)241263/4:

ԼՈՅՍ ՏԵՍԱԿ

«ԱԶԳԻԱԿ» ՕՐԱԹԵՐԹԻ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՅԱՌԻԿԸ

Պատկերազարդ, ճոխ լրովանդակութիւն, անդրազարձ՝ 2000ի գլխաւոր իրադարձութիւններուն: Յատուկ թղթածրարներ՝ Հայ Դատի եւ Համաշխարհայնացուածի մասին:

ՊԱՂՏԱՏ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ՔԱՐԻՂԻ ՄԱԿԵՐՈՒ ՅԱԻԵԼՈՒՄ

Պաղտատ երէկ վերստին ՄԱԿի ներկայացուցչարկղի սակերը լաւելումի ենթարկելու իր պահանջը, յայտնեցին իրաքեան քարիղ գնող յաճախորդներ:

Իրաք Դեկտեմբեր 1էն 12 առկայած էր արտածումը, որովհետեւ ՄԱԿ չէր արտօնած լաւելումը: Աւելի ուշ, Իրաք վերսկսաւ արտածման, սակայն կը նախատեսուի, որ 3ունուարին վերստին առկայուի արտածումը, եթէ 30էն 40 սենթի լաւելումը չընդունուի յատկապէս՝ յաճախորդներուն կողմէ: Պաղտատ օրական 20 միլիոն տակառ քարիղ արտադրելու իրաւունք ունի: Անոր արտածումները կը կապեն միջազգային շուկայի հինգ առ հարիւրը:

Միւս կողմէ, Իրաք երէկ դատապարտեց Թուրքիան, որ երկարաձգած է աներկեան եւ բրիտանական ուժերուն եւ օդանաւերուն կեցութիւնը Ինճիլիքի խարխուխի մէջ: Արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը յայտնեց, որ Թուրքիա պատասխանատու է այն վնասներուն, զորս կը պատճառեն այդ ուժերը Իրաքի մէջ: Նախարարութեան բանբերը ըսաւ, որ Պաղտատ Անգարայէն պահանջած է վերջ տալու օտար ուժերուն ներկայութեան:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՌՈՒՍԱԿԱՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆ ԿՈՒՍԻՆՍՔԻԻ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ

ՄՈՍԿՈՒԱ, 20 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսական չորս թերթերու եւ լրատուական միջոցներու խմբագրապետներ ու պատասխանատուներ աղերսագիր մը ուղարկեցին Միւսկոյ վարչապետ Խոսէ Մարիա Անաբրի, խնդրելու համար, որ ան ապատարածակէ վլատիմիր Կուսինսքին:

Նամակին մէջ կը նշուէր, որ Կուսինսքիի դէմ Մոսկուայի իշխանութիւններուն որդեգրած կեցւածքն ու միջոցա-

ռուները քաղաքական դրդապատճառներ ունին: Նամակը կը նշէր նաեւ, որ Ռուսիոյ արտայանձնուելով, Կուսինսքի պիտի ենթարկուի քաղաքական այնպիսի հալածանքի ուր, որ որեւէ կապ չունի արդարութեան եւ դատական հետապնդումի հետ:

Նամակին կրկնօրինակները ուղարկուած են նաեւ Մպանիոյ արդարութեան նախարարին եւ գլխաւոր դատարին:

●ՌՈՒՍԻՆՏ Դաշնակցային Խորհուրդը Չորեքշաբթի օր վաւերացուց Ռուսիոյ նոր օրհներգը, որ նախկին Խորհրդային Միութեան քայլերգն էր: Խորհուրդը հաւանութիւն տուաւ նաեւ ցարական Ռուսիոյ դրօշակը որդեգրելու ծրագիրին: Տունման 8 Դեկտեմբերին վաւերացուցած էր օրհներգին ու դրօշակին առնչուող օրինագիծերը:

ԲԱՆՏԱՒՈՐՈՒՄԸ
Տեր եւ տիկին Ալեք եւ Գալին Եաւերեան
Բախտաւորուած են Առջիմէկ մանչ զաւակով մը՝
ԱԼԵՔՍԱՆՏՐ
17 Դեկտեմբեր 2000 Պէյրուք

ՀԱՅ ԿԱԹ. ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐ. ՎԱՐԺԱՐԱՆ ՊՈՒՐՏ ՀԱՄՈՒՏ
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՊԱԶԱՐ
Կազմակերպութեամբ՝
ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏԻԿԱՆՆՅ ՄՈՒԲԹԵԱՆ
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 22 Դեկտեմբեր 2000ին, առաւօտեան ժամը 10:00էն 12:00, վարժարանի բակին մէջ:
ՀՐԱԻԸՐ

ԹՐԲԱԿԱՆ ԲԱՆՏԵՐՈՒՆ ՄԷՋ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ

Յաջորդական երկրորդ օրն ըլլալով թրքական բանտերուն մէջ շարունակուեցան բախումները, 19ի բարձրացնելով սպաննուած բանտարկեալներուն թիւը:

Ապահովութեան ուժերը երէկ ներխուժեցին Պոլսոյ Ումրանիէ բանտը, իսկ քանի մը ժամ ետք անոնք ներխուժեցին արեւմտեան մէկ շրջանի Չանաքքայէ բանտը:

Ներքին գործոց նախարարութեան մէկ բանբերը յայտնեց, որ երկու բանտերուն մէջ ալ զօրաւոր ընդդիմութիւն կայ: Ան աւելցուց, որ բանտարկեալները կը մերժեն վերջ տալ ընդդիմութեան: Արդարութեան նախարար Հիքմէթ Սամի Թիւրք կոչ ուղղեց բանտարկեալներուն վերջ տալու ընդդիմութեան եւ արհեստի բախումներուն: Թիւրք աւելցուց, որ բանտարկեալներուն կողքին սպաննուած են նաեւ երկու ոստիկաններ: Նախարարը դիտել տուաւ, որ ապահովութեան ուժերը Երեքշաբթի օր ներխուժած էին քսան բանտեր, վերջ տալու համար բանտարկեալներուն հացարկին: Բանտարկեալները, սակայն մերժած են: Չոհերուն մեծ մասը ինքզինքը հրկիպած է:

Բանտարկեալներուն եւ ոստիկանութեան միջեւ բախումները ցոյցեր հրահրեցին Պոլսոյ եւ Անգարայի մէջ, ուր բարկացած ցուցարարներ բախում ունեցան ոստիկաններու հետ:

Յունաստան ամբաստանեց Թուրքիան՝ մարդկային իրաւունքները բռնաբարելու յանցանքով: Վարչապետ Բուրաս Սիմիթիս յիշեցուց Անգարայի, որ մարդկային իրաւունքները յարգելը մեծ կարեւորութիւն պէտք է ներկայացրնէ Եւրոպական Միութեան անդամակցիլ ուղող երկիրներուն համար, որոնց կարգին է Թուրքիա:

«Էմնըսթի Ինթըրնէշնըլը» իր կարգին մտահոգութիւն յայտնեց ապահովութեան ուժերուն կողմէ որդեգրուած միջոցառումներուն համար: Էմնըսթի յայտնեց նաեւ, որ նամակ մը ուղարկած է Թուրքիոյ կառավարութեան, կոչ ուղղելով անոր, որ ապահովութեան ուժերը բիրտ միջոցներու չդիմեն:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԷԹԱ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՀԱՐՈՒԱԾԵԼ

Պասք անշատողականներ երէկ Սպանիոյ Պարսելոնա քաղաքին մէջ սպաննեցին ոստիկան մը: Պաշտօնական աղբիւրներ անմիջապէս ամբաստանեցին պիւնէալ ԷԹԱ շարժումը:

38 տարեկան Միկել Անխել Կերվիա մօտեցած էր ինքնաշարժի մը, որ կանգ առած էր Պարսելոնայի գլխաւոր պողոտաներէն մէկուն վրայ: Ինքնաշարժին մէջ գտնուող երկու պիւնէալներ կրակ բացած են ոստիկանին վրայ, յայտնեցին պաշտօնատարներ: Կարճ ժամանակ մը ետք, ոստիկանութիւնը գտած է ինքնաշարժը, որուն սնտուկին մէջ վեց քլ. պայթուցիկ նիւթեր գտած է:

Պարսելոնայի մէջ Սպանիոյ կառավարութեան բարձրաստիճան մէկ պաշտօնատարը հաստատեց, որ գործողութիւնը կատարուած է ԷԹԱի կողմէ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՄԱԿԻ ՄԻՋԿՐՈՆԱԿԱՆ... Շարունակուած 2րդ էջԸ

Չէյն Մոհամէտ Մեհտի Շամսէտտինի փոխանորդ Չէյն Քապալանի եւ տիրպի համայնքի հոգեւոր պետ Չէյն Պահժաթ Ղէյսի հետ:

Սոյն հանդիպումներուն ընթացքին Չէյն պարզեց կրօններու միջեւ գործակցութիւն յառաջացնելու ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանին եւ իր պատկերացումները: Անոնց փոխանցեց Արամ Ա. կաթողիկոսին կարեւոր նպաստը այս ուղղութեամբ, ինչպէս նաեւ ուրիշ իմանալ անոնց տեսակետը Միջին Արեւելքի խաղաղութեան գծով կրօններու բերելիք նպատին մասին:

Անթիլիաս իր կեցութեան շրջանին, Պաւ Չէյն այցելեց Գարնիկաւ եւ Թոշնոց Բոյն եւ մօտէն ծանօթացաւ այս երկու կարեւոր հաստատութիւններուն, եւ ընդհանրապէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կեանքին ու առաքելութեան:

Պաւ Չէյն նաեւ հրաւիրեց վեհափառ հայրապետը մասնակից դառնալու եւ իր խօսքը արտասանելու Տաւուի միջազգային տնտեսական համագումարին:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ... Շարունակուած Ա. էջԸ

ՄԱՍՆԱԳԵՏ ԲԺԻՉԿ

Մասնագիտութիւններ՝ ընդհանուր վիրաբուժութիւն, ոսկորի վիրաբուժութիւն, շիղեքու եւ ուղեղի վիրաբուժութիւն, քիթի, ականջի եւ կոկորդի վիրաբուժութիւն, ակնաբուժութիւն, մտային եւ հոգեկան հիւանդութիւններ, տարրալուծարանի մասնագէտ բժիշկ:

Թեկնածուն պէտք է ըլլայ 18էն 35 տարեկան եւ վկայուած՝ տունէալ մասնագիտութեան մէջ, պայմանաւ որ մասնագիտացումը երեք տարիէն աւելի տեւած ըլլայ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԺԻՉԿ

Ենթական պէտք է ըլլայ 18էն 32 տարեկան եւ վկայուած՝ համալսարանէ մը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՐՅԵՐՈՒ ՄԱՍՆԱԳԵՏ

Ենթական պէտք է ըլլայ 18էն 30 տարեկան եւ վկայուած համալսարանէ մը՝ հետեւեալ մասնագիտութիւններէն մէկուն մէջ. վարչական գիտութիւններ, տնտեսագիտութիւն, հաշուապահութիւն, դրամային եւ դրամատնային գիտութիւններ, գործարարութիւն, համակարգչային գիտութիւններ:

ԵՐԱԺԵՏ

Ենթական պէտք է ըլլայ 18էն 30 տարեկան եւ համալսարանական վկայական ստացած՝ հետեւեալ հաստատութիւններէն. Ազգային երաժշտական ունեցիլ վկայական՝ երաժշտական գործիք մը նուագելու, ճանչցուած երաժշտանոցէ մը՝ խմբավարութեան վկայական, դաշնաւորումի վկայական:

ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ՕԳՆԱԿԱՆ

18էն 30 տարեկան եւ յաջողութեամբ արարած՝ Ազգային երաժշտանոցի դասընթացքներու ճրդ տարին կամ անոր համապատասխան ող դասընթացք մը:

ԵՐԱԺԵՏ ԵՆԹԱՍՊԱՅ

18էն 27 տարեկան

եւ յաջողութեամբ արարած՝ Ազգային երաժշտանոցի 4րդ տարին:

Թեկնածուն երէն կը խնդրուի անձամբ ներկայացնել իրենց դիմումները աշխատանքի պաշտօնական ժամերուն, 19 Դեկտեմբեր 2000էն սկսեալ մինչեւ 13 Յունուար 2001, հետեւեալ վայրերուն մէջ՝ Թիկուսքային աշխատանքներու կեդրոն՝ Ռուհանիլէ գործավարութեան համար, Չինուորամասնաւ որ մասնագիտացումը երեք տարիէն աւելի տեւած ըլլայ:

Դիմումներուն հետ պէտք է ներկայացնել հետեւեալ փաստաթուղթերը.

- 1.- «Իխրաժ քայտ», ուր կ'ըսուի, թէ ենթական լիբանանցի է աւելի քան 10 տարիէ ի վեր:
- 2.- Բարի վարուց վկայագիր՝ թաղապետէն:
- 3.- Սըժըլ Ատիլի:
- 4.- Չորս լուսանկար (4x4 սմ.) երկուքը՝ կողմնակի նկարուած, ինչպէս նաեւ՝ երկու 12x8 սմ. լուսանկար, ուր ենթական կ'երեւի անբողջ հասակով:
- 5.- Լիբանանեան Բ. պաքայրէջայի կամ անոր համազօր վկայական վաւերացուած լուսապատճէնը:
- 6.- Տունէալ մասնագիտութեան համալսարանական վկայական կամ անոր վաւերացուած լուսապատճէնը:
- 7.- Բժիշկներու պարագային՝ մասնագիտացման վկայականը:
- 8.- Բժիշկներու պարագային՝ Լիբանանի մէջ իբրեւ բժիշկ աշխատելու արտօնութիւնը:

ԿԱՐԵՒՐ

Ա.- Թիւ 1, 2, 3 եւ 4 փաստաթուղթերը 30 օրէն աւելի ինչ պէտք չէ ըլլան:

Բ.- Լիբանանեան Համալսարանէն պատալ հաստատութեան ստացուած վկայականը պէտք է կրթական նախարարութեան կողմէ վաւերացուի իբրեւ յիշեալ համալսարանի վկայականին համազօր:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ԴԱՍՏԻՐԱՎՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆԸ
ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ՝ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՀԱՅ ՀԱՄԱՏՔԻ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին կազմակերպութեամբ, 2001 տարուան 15 Յունուարէն մինչեւ 16 Մայիս, դարձեալ յարանական դրութեամբ դասընթացքներ տեղի պիտի ունենան Կիլիկիոյ կաթողիկոսութեան մայրավանքին մէջ, Անթիլիաս, իբրեւ շարունակութիւն անցեալ երկու տարիներու սկսուած դասընթացքին:

Ներկայ տարեշրջանի դասընթացքները պիտի ունենան գլխաւոր երկու առարկաներ. 1.- ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՍՏՈՒԹԻՒՆ (13էն 20րդ դարերը):


2.- ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ՝ ՔԱՂՈՒՍԾ ԱՍՏՈՒՍԾԱՇՈՒՆՉԵՆ:

Հայ եկեղեցոյ եւ հոգեւոր գրականութեան պատմութիւնը պիտի ներկայացուի երկուքը Չորեքշաբթի իրիկունները, միշտ նոյն ժամերուն, 8:00էն 9:30:

Այս նիւթերուն եւ դասընթացքին ընդհանուր ծրագիրը կարելի է ստանալ Քրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակէն:

Կը հրաւիրենք այս նիւթերով հետաքրքրուողները, Աստուածաշունչին եւ Հայ Եկեղեցոյ պատմութեան ու հաւատքին մասին անոր ծանօթութիւններ եւ ներշնչում քաղելու այս դասընթացքներուն ընդմէջէն:

ՎԱՐԻՉ ՆՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՄԱՍԹԵՐ ՄՈՒԼ
**MASTER MALL Supermarket**
ԱՄԷՆ ՕՐ ԹԱՐՄ ԵՒ ԸՆՏԻՐ ՄՍԵՂԷՆՆԵՐՈՒ ԸՅԼԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ, ՆՈՒԱԶՈԱԳՈՅՆ ՄԱԿԵՐՈՎ:
ԳՆՈՒՄԴ ԿԱՏԱՐԷ՝ ՍՈՒՓԸՐՄԱՐՔԷԹ ՄԱՍԹԵՐ ՄՈՒԼԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՊԵՐԹ ԲՈԶԱՐԵԱՆ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԻ

18 Դեկտեմբերին Հայաստանի նախագահ Ռոպերթ Բոզարեանի ստորագրած հրամանագրերով համաձայն, կառավարության մեջ կատարվեցան նոր նշանակումներ:

Հայաստանի տարածքային կառավարման եւ քաղաքաշինության գործունեությունները Համակարգող նախարարի պաշտոնին ազատ կացուցուցեցաւ Լէոնիտ Յակոբեանը եւ անոր տեղ նշանակուեցաւ Յովիկ Արրահամեանը:

Նոր նախարարը ծնած է 1958ին, Արտաշատի Միջնադարից: Ան տնտեսագետ է եւ մինչեւ 1991 զանազան ընկերություններում մեջ վարած է Համապատասխան պաշտոններ: Ապրիլ 1991ին նշանակուած է Արտաշատի գիւղի - քոնսերվատորիայի տնօրէն: 1995էն 1999 թվականներուն եղած է Ազգային ժողովի պատգամաւոր: Նոյեմբեր 1996ին ընտրուած է Արտաշատի քաղաքապետ, իսկ 1998ին նշանակուած է Արարատի մարզպետ:

Նախագահ Բոզարեանի ստորագրած մեկ այլ հրամանագրով Արմէն Իսազուրով ներքին գործոց փոխ նախարար նշանակուեցաւ:

Արմէն Իսազուրով ծնած է 1945ին, Պաքու: Աւարտած է Պաքուի Պետական համալսարանի իրաւաբանական հիմնարկը: Երկար տարիներ ղեկավար պաշտոններ վարած է ներքին գործոց նախարարության կողմէ:

Ռուսաստանի Հայաստանի համակարգչի ներքին գործոց վարչության պետ, ապա նշանակուած է Հարարաղի ներքին գործոց նախարար: Մինչ այդ ան Ռուսիայում մէջ Հայաստանի ներքին գործոց նախարարութեան ներկայացուցիչն էր: Գործունե մասնակցութիւն ունեցած է դարադրեան շարժման եւ ազատագրական կռիւներուն մէջ: Ունի զօրավարի աստիճան:

Յայտնենք, թէ 15 Դեկտեմբերին նախագահ Ռոպերթ Բոզարեան, հիմնուելով Արդարադատութեան նոր հուշարկի եզրակացութեան վրայ, հրամանագրով մը վաճարած Շահինեանին շնորհեց արդարադատութեան երրորդ դասի պետական խորհրդակցի ղեկավարի աստիճան:

Նոյն օրը նախագահը Համապատասխան հրամանագրերով Ջանգեղուցի կայսրի գիւղերում գտնուող Սամուէլ Մնացականեանի վաշտունէի ազատ արձակեց եւ տեղը նշանակեց Կոտայքի Յակոբեանը: Նաեւ՝ Արմաւիրի մարզի առաջին ատենի ղեկավարը նշանակեց Գալիկ Նազարեանը, Կոտայքի մարզի՝ Ռազմիկ Ազարեանը, իսկ քրէական եւ գիւղատնտեսական գործերով վերաբնիչ ղեկավարի նախագահ նշանակուեցաւ Տիգրան Սահակեան:

ԲԱԳՐԱՏԱՇԵՆԻ ԶՈՒԿԱՆ ԿՈՒՆԵՆԱՅ ՆՈՐ ՍԱՔՍԱՏՈՒՆ

17 Դեկտեմբերին տեղի ունեցաւ Բագրատաշէնի սահմանաձեւում առեւտրի շուկային նոր մաքսատան բացումը:

Բագրատաշէնի մաքսատունը Մեղրիի մաքսատունէն ետք բարեկարգուած երկրորդ մաքսատունն է, որ օժտուած է 95 միլիոն դրամ արժող յատուկ սարքաւորումներով՝ միտմանակ 3,6 թոն բեռ կշռելու կարելիութեամբ, համակարգիչներով եւ մաքսանենգութեան վերահսկելու կարելիութեամբ: Այսուհետեւ իւրաքանչիւր անցորդի անձնաթուղթի տուեալները պիտի արձանագրուին համակարգիչներուն մէջ, ինչ որ կարելիութիւն կ'ընձեռէ (մաքսային նոր օրէնսգիրքին համաձայն) սահմանային շրջաններու բնակիչներուն ամիսը մէկ անգամ, իսկ միւս քաղաքացիներուն տարին երկու անգամ առանց մաքսագրծման 50 քիլոգրամ բեռ փոխադրել:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՅՈՅՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ

1 եւ 2 Դեկտեմբերին Աթէնքի «Ջափի» համալիրի սրահներէն մէկուն մէջ տեղի ունեցաւ «Մանուկներու Ընկերները» յունական բարեսիրական կազմակերպութեան նախաձեռնած Մ. Մննդեան տօնավաճառը:

Այս կազմակերպութիւնը նիւթական օժանդակութիւն կը տրամադրէ Յունաստանի կարիքաւոր ընտանիքներուն, միայնակ մայրերու գաւակներուն եւ որբանոցներուն:

Տօնավաճառին, այլ երկիրներու կարգին, կը մասնակցէր նաեւ Հայաստան:

Հայաստանի ցուցասրահը զարդարուած էր Եռագոյն դրօշով եւ Հայաստանը գովազդող տեղեկատուական նիւթերով: Տօնավաճառի յաճախողներուն կ'առաջարկուէր հայկական յուշանուէրներ, հայկական աւանդական քաղցրեղէններ, ինչպէս նաեւ՝ հայկական ուտելիքներու ընդարձակ տեսականի մը:

Տօնավաճառի բացման ներկայ էին Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Ա. Պետրոսեան եւ խորհրդակցական Կ. Դանիէլեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱՄԱՍՆԱԸ ՄԻՋԵՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

14 Դեկտեմբերին Համաշխարհային Դրամատան Ուաշինկթընի կեդրոնին մէջ Հայաստանի եւ Համաշխարհային Դրամատան Միջազգային Ջարգացման Գործակալութեան միջեւ ստորագրուեցաւ Հայաստանի մէջ դատախարակական բարեփոխումներու իրագործման աջակցող վարկային համաձայնագիր մը:

Հայաստանի կողմէ համաձայնագիրը ստորագրած է Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի դեսպան Արման Կիրակոսեան, իսկ Համաշխարհային Դրամատան կողմէ՝ Համաշխարհային Դրամատան Հայաստանի գրասենեակի տնօրէն Ճուսի Օ'Քոննըրը:

Ըստ համաձայնագրին, 2001-2004 թվականներուն ընթացքին Համաշխարհային Դրամատունը յանձնառուութիւն կը ստանձնէ 8 միլիոն 600 հազար տոլարով վարկաւորել Հայաստանի մէջ դատախարակական բարեփոխումներու իրագործումը՝ նպատակ ունենալով աջակցել դատախարակական համակարգի կառուցուածքային ամրապնդման, դատարաններու ենթակառուցուածքի վերականգնման, դատական որոշումներու իրականացման գործընթացի բարելաման, դատաւորներու եւ դատական համակարգի աշխատողներու մասնագիտական կատարելագործման, ինչպէս նաեւ՝ իրականացնելու տեղեկատուութեան տարածման եւ դատախարակական խնդիրներու վերաբերեալ հասարակական գիտակցութեան ու տեղեկացուածութեան բարձրացման:

ԱՊՐԻՆԻ ԶԿՆՈՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒՐ

ԵՐԿՈՒ ԶՈՒ ԵՄ՝ ՍԵՒԱՆԱՅ ԼԻՃԻՆ ՄԷՋ

Հակառակ Սեւանյա լիճին մէջ ձկնորսութեան դժուորութեան արգելքին, շատեր կը փորձեն անտեսել ատիկա եւ յաճախ արկածներու հանդիպելով իրենց կենսաբանական վտանգի կ'ենթարկեն:

Նման դէպք մը պատահեցաւ անցեալ Կիրակի, 17 Դեկտեմբերին, երբ անակրկալ փոթորիկի մը զոհ գացին ծովագիւղի երկու երիտասարդներ: Անոնց ծննդատեղն ունակը լիճի ափին գտնուած էր:

Ափին գտնուած հետու ընկնուցեալ Ալմաստեաններու վկայութեամբ, դէպքը շատ արագ պատահեցաւ եւ կարելի չեղաւ օգնութեան հասնել անոնց: Արկածէն երկու օր անց, տակաւին անոնց դիակները չեն գտնուած: Յայտնենք, որ վերջին 20 օրերուն ընթացքին նման հինգ դէպքեր պատահեցան լիճի մէջ հինգ երիտասարդներու կեանքը, որոնցմէ երեքին դիակները տակաւին չեն գտնուած:

ՍԱՍՈՒԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԻ ՓՈՆ ԸՐԱՄԱՆԱՏԱՐ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահի մամուլի ծառայութիւնը կը յայտնէ, որ նախագահ Արկար Ղարաբաղեան 18 Դեկտեմբերին հրամանագրով մը ստորագրած է գնդապետ Սամուէլ Կարապետեանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան բանակի փոխ հրամանատար նշանակելու մասին:

ՄԱՐԻԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԶՈՒՆԱՆՈՒՄԻՐ ԿԸ ՎԱԵՐԱՅՆԵ 10 ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

19 Դեկտեմբերին տեղի ունեցած է Հայաստանի կառավարութեան մարդասիրական օգնութեան կեդրոնական լիցենզիայով հերթական օրը: Յանձնախումբը քննարկած էր վաւերացուցած է 10 բարեգործական ծրագիր:

Այդ ծրագիրներու շարքին են «Փիւնիկ» հաշմանդամներու միութեան կողմէ իրականացուող բազմաբնոյթ ծրագիրները, որոնք կը միտին հաշմանդամներու ֆիզիքական եւ ընկերային վերականգնման ու հասարակութեան մէջ անոնց լիարժէք համարկման:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամը յանձնախումբի վաւերացման անդամացուցած էր երկու ծրագիրներ՝ ամերիկահայ բարեարարներու ֆինանսատրամբ Երեւանի «Անանիա Ծիրակաջի» վարժարանի մասնակի վերանորոգման ծրագիրը եւ Միացեալ Նահանգներու արեւելեան ափի հայ համայնքի ֆինանսատրամբ Ստեփանակերտի մէջ դարմանատան մը կառուցման ծրագիրը:

Հայաստանի արժանացած են նաեւ գաղթականներու հարցերով անդամակցական խորհուրդի հինգ ծրագիրները, որոնք պիտի իրականացուին Գեղարքունիք, Արմաւիր եւ Վայոց Ձոր մարզերու գաղթականներով բնակուած գիւղերում մէջ: Անոնք գլխաւորաբար կ'առնչուին գիւղական դպրոցներու վերանորոգման եւ շրջագիծներու կառուցման հետ:

Մարտիի վասպուրականցիներու Միութիւնը նախաձեռնած է Արագածոտնի մարզի Ոսկեհատ գիւղի միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքներու իրականացման՝ այդ նպատակով հաճախակալով շուրջ 50 հազար տոլար: Արդէն սկսած են դպրոցի տանիքի վերանորոգման աշխատանքները: Այս ծրագիրը անջակատ արժանացած է յանձնախումբի հաւանութեան:

Բարեգործական ծրագիրներու վաւերացման հետ միասնական լիցենզիայով սահմանած է անոնց շրջագիծի մէջ հարկային եւ մաքսային արտօնութիւններու շրջանակը: Նիստին ընթացքին քննարկուած են նաեւ անոնցմէ կազմակերպութիւններու հասցեով բարեգործական բեռներու ցրման մասին: Ինչպէս նաեւ նախապէս վաւերացուած ծրագիրներու իրականացման հետ անմիջականօրէն անձնուած գործարքներ եւ այլ հարցեր:

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ ԱՐԹՈՒՐ ՂԱՐԻԲԵԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՅՈՒՄ

18 Դեկտեմբերին Երեւանի մէջ բացուած կատարուեցաւ արցախեան ազատագրական պայքարի ընթացքին գործուած քանդակագործ Արթուր Ղարիբեանին թանգարանին: Ներկայացուած ցուցանմունքները Ա. Ղարիբեանի ուսանողական տարիներուն տարբեր նիւթերէ եւ արուեստի տարբեր սեռերով կատարուած աշխատանքներն են՝ քանդակներ, գեղանկարներ, փորագրութիւններ:

Արթուր Ղարիբեան Երեւանի Գեղարուեստական թատերական հիմնարկի այն միակ ուսանողը եղած է, որուն աւարտական աշխատանքը՝ «Հայոց արքայ» քանդակը, յետ մահու պաշտպանութեան ներկայացուեցաւ եւ յանձնարուեալ կողմէ գնահատուեցաւ գերազանց:

Հայ արուեստին համար կորուստ դարձած Ա. Ղարիբեան առաջին իսկ օրէն կը զինուորագրուէ արցախեան պայքարին եւ մարտական երկար ճամբայ կ'անցնի: Ան կը զոհուի 1992 թվականին, Մարտակերտի շրջանի Սրխաւենդ գիւղին մօտ: Ա. Ղարիբեան յետ մահու կ'արժանանայ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հերոսի կոչման եւ կը պարգւտատուուի «Մարտական խաչ» առաջին կարգի շքանշանով:

Թանգարանի բացման ընթացքին խօսք աւելին Ա. Ղարիբեանի մարտական ընկերները՝ Արկաղի Տէր Թադէոսեան (Քոմանտոս), Արմէն Եղիայեան, Հ. Յ. Գեղազոյն Մարմինի անդամ Գեղամ Մանուկեան եւ ուրիշներ: Ապա ցուցադրուեցաւ «Արթուր Ղարիբեան» տեսաերկը:

ՄԻԱՅԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ 9 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ՆՊԱՍՏ ԿԸ ՓՈԽԱԴՐԻ Է ՀԱՅԱՍՏԱՆ

Միացեալ Հայկական Հիմնադրամի 111րդ թիւիքը Երեւան հասաւ 9 Դեկտեմբերին՝ փոխադրելով մօտ 9 միլիոն տոլար արժողութեամբ մարդասիրական օգնութիւն: Այս թիւիքը կը նկատուի ամէնէն թանկարժէք օղանակային առաքումը Միացեալ Հայկական Հիմնադրամի տասնմէկամեայ պատմութեան մէջ:

1989էն ի վեր Միացեալ Հայկական Հիմնադրամը 111 թիւիքներով եւ 635 ծովագիւղներով 301 միլիոն տոլար արժողութեամբ մարդասիրական օժանդակութիւն ուղարկած է Հայաստան:

Միացեալ Հայկական Հիմնադրամը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագումարին, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց եկեղեցուց Ամերիկայի առաջնորդարանին, Հայաստանեայց Առաքելական եկեղեցուց Ամերիկայի առաջնորդարանին եւ «Լինսի» Հիմնարկին:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԱԼԻՑ ԱՂԱՊԵԱՆԻ «ԱՅՔ՝ ԱՊՈՒՐԻՆ» ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՏՈՐԸ

Վերջերս, Լոս Անճելըսի «Մի ու Մառ» հրատարակչատան կողմէ լոյս տեսաւ մանկագիր եւ մանկավարժ Ալիս Աղապետեանի նոր հատորը՝ «Այք՝ Ապուրին»:

Գեղատիպ ու մանկավարժական մօտեցումով ներկայացուած այս հատորին պատկերազարդումը կատարած է Անահիտ Սարգիսեան, իսկ երգը՝ «Այքբեմարան», Լուսինէ Աղապետեան - Հապրատ:

Հատորը երկնապատ է՝ իր անկերէն եւ ֆրանսերէն թարգմանութիւններով: Ան կը բաղկանայ 56 էջերէ: Գիրքին հրատարակութեան նիւթական օժանդակած են «Պետիկեան» հիմնարկութիւնը եւ Հայթիայեան ամուլը: Ան ձեռնուած է Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հուշարժան 1700ամեակին եւ գինը 15 տոլար է:

Մտահալու համար դիմել հետեւեալ հասցէին:
Dzil - U - Dzar Publication
1085 Hanley Ave.,
Los Angeles, CA 90049
Ի - մէջ՝ Dzuludzar@aol.com
Հեռաձայն՝ (310) 471 - 5627

ՀԱՅԿԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՆՈՒՆԵՍՔՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՅԱՆԿԻՆ ՎՐԱՅ

ԵՆՈՒՆԵՍՔՈՒ յուշարձաններու միջազգային յանձնարարութիւն թելադրանքով, Հայաստանի գիտնական պատմական եւ մշակութային յուշարձաններ պիտի ներանուեն ՄԱԿԻ նշեալ կազմակերպութեան Համաշխարհային Ժառանգութեան ցանկին վրայ:

Երկու կառույցներն են Ս. Էլմիճիճեան եւ Չուարթնոցը՝ իր բնակատեղակութիւններու ամբողջութիւն, եւ Գեղարքը: ԵՆՈՒՆԵՍՔՈՒ այս ցանկին մաս կը կազմեն նաեւ Դանիայէն, Սենեկալէն, Չինաստանէն եւ աշխարհի այլ վայրերէ 691 պատմամշակութային նշանակութիւն ունեցող յուշակոթողներ կամ կառույցներ:



GAS G. Ayanian & Sons
Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱՋԱՅՆԻ ԹԻԻՅԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ
«Ազգայի» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումը քննարկելու ընթացքին գիրքով (հաստատութեանց պարագային՝ մանրագրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում) անդամակցել «Ազգայի» ծանուցումներու գրասենեակը:

ՅՈՒՇԱԼ ՊՈՍԵՍ ԱՆԽՈՒՆԱՅԱՑ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՀԱՅ ԵՄ ՏԷՏԷ, ՀԱՅ

Տոտ կը կոչէին զինք, հարսը, թոռ-նիկն ու գաւալը:

Մերժած էր հիւանդանոց երթալ, հիւանդ էր, մաշած, հիւսուած տարիներու ժամգով: Յողթական էր սակայն, նոյնիսկ իր մաշուածին մէջ, սպիտակ, փարթամ պէտերը ծխախոտի ծուխով ներկուած կը յամառէին մնալ հայրտ, այլ բարի ժպիտով:

Աստուծ, Յամա, Յոմս, սուրիական անապատները, Յալէպ եւ այժմ հեռու, հեռացած, շատ հեռացած հայրենիքէն, Ամերիկա:

- Մամա, ուա՞յ Կրան փա՛ս մուսթաշ ի՞զ սօ ռիտիթիլըս (ինչո՞ւ մեծ հօր պէտիը այրթած ծիծաղէի է):

Թոռնիկն էր անգլերէն թոթովողը: Աստուծի հայրիկին մէկ հատիկ տղուն Մերթրիք անորանիկ գաւալը: Մարութ, փապան Մարութ հօրքրին թոռնիկը հայերէն չէր խօսեր: «Ողբերգութիւն, աներեւակայելի ողբերգութիւն», կը մտածեր ու կը տառապէր լուռ:

Դողողու ծնօքը անկողնէն դուրս հանած, դժուարութեամբ կը շոյէր մագերը թոռնիկին, որ օգուտներով ստեղծուած մտերմիկ պահէն կը փորձէր ձեռքը երկարել տէտէին պէտերուն:

Մարութ հայրիկին աչքերուն արցունքը ծիրանի գօտիի մնամ կը տարբարողորուէր անցեալի յիշատակներով: Ծանր կոպերուն տակ կը տարածուէր հայկական արհաւիրքի ժպատներ: Իր կեանքի ողբերգութիւնը չէր, որ կ'ապրէր այդ րոպէին, մահատակուած եղբայրներուն յիշատակը չէր իր ցարը, կը յիշէր շիրուճը իր կնոջ Մերթրիք իր մահածներծի կուրծքին սեղանով: Այո, այս բոլորը հիւանդ օրերու մեծութեան մէջ յուզիչ, ցնցիչ վերապրումներ էին: Բայց ոչ, անցեցող չէր իմմա, իր սպասուած չէր մտահոգիչը, անիմաստ ու գաղթական ներկային հանդուրժել փորձած էր, իր ծննդատուն վիշտը չկարենալ գտնելու էր փոքրագոյն ու վերջնագոյն միջոցառութիւնը ազգային թէ անհատական կեանքի մէջ, աչքերը յառած հորիզոնին եղանակի հայկական գոյնով հորիզոնի մը:

Իմչո՞ւ Մերթր Ամերիկա եկաւ, իր մէկ հատիկ տղան, չորս տարեկանէն այնքան դժուարութեամբ այս դիրքին ու տարիքին հասուցեցած: Լացած էր, երբ Մերթր ամեն գնով վճռած էր Ամերիկա անցնիլ. ինք տարիներով մերժած էր լքել Յալէպը, բայց չէր կրցած ապրիլ միակ գաւեւն հեռու, զգացած էր իր մօտաւուտ վախճանը «Գոնէ իր ձեռքով զիս հողին յամծծէ»: Շատ բաներ լսած էր Ամերիկայի մասին, բայց իր գաւեւնի սիրոյն ստիպուած էր գալ: Յուզուած էր Յալէպի մէջ, երբ սասունցի փոռպան բարեկամները եկած էին ողջերթի իր Ղոզտան բնակարանին մէջ:

Լացած էր:

Վերջապէս յաղթած էր Մերթր եւ պարտուորած, որ հայրը Յալէպէն հրաժեշտ առնէ:

Օդանաւի մէջ չէր դադարած լալէ: Յիւրընկալ օրիորդները ամեն գնով փորձած էին խօսիլ հետը, ի՞նչ կրցած անոնց բացատրել իր ցարը: Ի՞նչ քսեր անոնց եւ ի՞նչ պէտ քսեր: Ըսէ՛ր, թէ իր միակ տղան ամերիկահիկի հե՛տ անուսնացաւ, քսէ՛ր, որ իր թոռնիկը հայերէն չէր գիտեր, քսէ՛ր, որ սասունցի իր փոռպան ընկերները իրենց բթն տակէն ծիծաղէր էին:

Ամերիկա հասած էր երկչոտ, անհամարձակ, տուև առաջնորդուած: Երկրորդ օրը հայ քահանայ մը բարի գալուստի եկած էր, հայերէն Աետարան կարդացած էր, տվորական, մեր աշխարհիկ լեզուով, անգլերէն հնչիւններով:

«Մեղայ Աստուծոյ»:

Քահանան իսկ փոխուած է այս սատանայի երկրին մէջ, ո՛ր է փիլոնը, փակեղը, հապա մօրո՛ւ էք... Այս անգամ ալ խորհրածութիւնը պահած էր ինքն իր մէջ:

Դժոխք էր, դժոխք, աղքիկները փողոցներուն մէջ երիտասարդներուն հետ, գրեթէ վարտիքներով եւ կրծկալներով կը պտտէին:

Մեղայ Քեզ, Աստուծ:՝

Մշեցի եղիշը այցելութեան եկած էր, «Վայ եղիշ, վայ», ան ալ փոխուած էր: Գոյնգոյն շապիկ մը հագած, կարծ տաբատ մը եւ թծնիսի կօշիկներ, այսպէս եկած էր իրեն այցելելու փոռպան Բոնաշնոցի եղիշը:

Յէ՛լ, կիտի աշխարհ:

Ծանօթացած չէր տակաւին ճշմարիտ կեանքին, տունէն դուրս, Մշեցի եղիշէն միայն ամերիկացի հարսին մասին հարցուցած է: Աղուոր, բարի, կապրտ աչքերով, խարտեաշ ամերիկոսի մըն էր, բայց շաբաթը անգամ մը, առանց ամուսնուիցն ընկերային հաւաքոյթներու կ'երթար:

Մերթր կը հասկնար իր հօր տառապանքը:

Այն օրուրէն սկսեալ, երբ հայրը եկած էր, տան բնական կեանքը փոխուած էր: Ընձան գործ չուներ Մարութ հայրիկին հետ, արդէն հաղորդակցութեան միջոց ալ չկար իրենց միջեւ:

Բոլորն ալ լուռ կը տառապէին իրենց խղճի խաթնէ:

Մարութ հայրիկ կը զգար, որ իր տղան երջանիկ չէր իր տառապանքը տեսնելով և յաճախ հայերէն կը խօսէր իր ներխայտեան, հայ հիւրեր կը բերէր, «հին հայեր» հօրը բացատրութեան, «տի՛նճ ոսկորներով, հայրենիք ծնած իրա հայեր»:

Մերթր իր գաւեւն հայերէն Աստուծաշունչ մը բերած էր, հայրիկը ուրախացնելու: Փոքրիկ Մարթին առանց մեծ ուրախութեան ընդունած էր, ուրախ չէր նաեւ Մարութ հայրիկը, որ իր մօտ կանչելով թոռնիկը ձեռքէն առած էր թարգմանուած Սուրբ Գիրքը եւ իր բարձին տակէն հանելով անոր տուած էր իր հետ Աստուծէն, Եդեմնէն փրկած Աստուծաշունչը, գրաբար, որուն մէջ էին բոլոր սրբութիւնները, որուն մէջ էին, քստ իրեն, հայոց թրիստուծութեան գաղտնիքը: Գրաբար, կաշեկապ էր բաւականին լաւ պահպանուած Աստուծաշունչ մը: Իր տղուն եւ թոռնիկին ներխայտեան յուզուած, յիշած էր պատմութիւնը այդ Աստուծաշունչին: Յամբուրած էր, խաչակնքած էր, թուլցած էին ձեռքերը, սկսած էր վերստուի լալ: Ապա խօսքը ուղղած էր իր գաւեւն եւ հարսին:

- Չեզմէ բան չեմ ուզեր, միայն թոռնիկիս հետ հայերէն խօսիմ:

Ընձան էր Մերթր ժպտուցած էին եւ առաջին անգամ ըլլալով ընձա մետ-Յուս Եր իր այդ լեռնցի աներոջ բազուկներուն մէջ եւ Մերթրէն սորոված քանի մը նախադասութիւններ գործածած էր:

- Յայրիկ, մենք թեզ շատ կը սիրենք: Կեանքի բոլոր բեւեռներէն, մակերթ-թացութիւններէն փրկուած, չէր կրնար բացատրել, թէ ի՞նչ պէտ ցարդուած, քիւրտերուն եւ թուրքերուն կողմէ մահատակուած, լեռներու, ձորերու, գետերու մէջ խողիտուած, բայց տակաւին հայ մտացած, ինք չէր կրնար պարտողրել իր հայկականութիւնը, երբ կոտորած չկար, քիւրտ ու թուրք չկար, հալածանք չկար:

Այս կտոր իրեն համար շատ ստակ չէր, քանի որ Ամերիկան միայն իրեն գեղեցիկ եւ բոլոր յարմարութիւններով օժտուած տունն էր եւ պատկերասփիւռի հաղորդումները, որոնց իւրաքանչիւրին հասցէին սասունցիական հայրոջս մը կամ ամե՛ծք մը ունէր:

Յայրերէնը մոռնալ միթէ կարելի՞՞ է հայ քրիստոնէայի, սասունցիի արիւն կրող հայրոջի մը համար:

«Յէ՛լ, կիտի աշխարհ, ես թեզ ես պէտ դարձնողին մար...»

Ամիսներով տքմանքով վարձելով չաբաթօրէպ վարժարանի օժանդակութեամբ չորս տարեկան փոքրիկն Մարթին սկսած էր հայերէն թոթովել:

Եւ Մարութ տէտին 100րդ տարեդարձին, կարկանդակի մը քարդարանքով եւ սասունցի «տի՛նճ ոսկորներով» հայերու ներկայութեամբ Մարթին երգեց,

«*Աստուծ գաւառ Միմայ Լանջին, Չկայ մնամ Արմենակին...*»
Երգեց ամբողջ երգը:
Երգեց Աղբիւ Մերթրի երգը:
Երգեց «*Մուլթան կ'ուզի...*»:

Եւ տէտէին փաթթուելով փշեցից 100 մոնիկները:

Տոտն պի՛նդ, շատ պի՛նդ համբուրեց իր թոռնիկը, անոր հետ հայերէն խօսեցան, իսկ Մարթին քաշաբար պատասխանեց
- Տոտ եւ հայ եմ, ես հայ եմ, ես կը կոչուիմ Մարութ Աճեմեան:

Երգ ու պար:
Ուրախ էին բոլորն ալ, բայց յուզուած եւ յոգնած տեսնելով տէտէն կըրճ կարճ կարճ հանգիստութիւնը:
Անձծի՛նճ մնալով սասունցի պապը մտքով բարձրացաւ Ս. Կարապետի վանքը, գնաց Բոնաշնոց գիւղը, գտաւ իրենց տունը, իրենց այգիի փոքրիկ թուփը, իր թուփը շօշափեց, փրցուց ողկոյզ մը, պի՛նդ պի՛նդ մէջ առաւ եւ մկնկացաւ այս անձեռն աշխարհէն, ժպիտով մը բարի, խաբկանքով մը անուշ:

ՊԵՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՋՉՈՒԹԻՒՆԸ

Պետական լրատուամիջոցների գոյութիւնը սովորաբար հիմնաւորում են պետական քարոզչութեան անհրաժեշտութեամբ: Պետական քարոզչութիւնն իրօք խիստ անհրաժեշտ եւ կարեւոր գործ է: Սակայն զրա համար պետական լրատուամիջոցների առկայութիւնը ամենեւին պարտադիր չէ: Իսկ յաճախ, ինչպէս եւ մեր երկրի ղէպքում է՝ պարզապէս վնասակար:

Ովքեր առիթ են ունեցել լինել Միացեալ Նահանգներում, հաւանաբար տեսել են, որ երկրի խոշորագոյն հեռուստաընկերութիւնները (այնտեղ պետական հեռուստաընկերութիւններ չկան) իրենց օրն սկսում են Սպիրտակ Տնից՝ հեռուստակարճով: Նրանք հերթ են կանգնում, որպէսզի հարցեր տան նախագահի մամլոյ քարտուղարին՝ երկրի ղեկավարի պաշտօնական ներկայացուցչին: Նա ամէն օր տեսախցիկների առէ՛ն պատասխանում է նախագահին վերաբերող բոլոր հարցերին, լինի դա միջազգային կամ ներքին մի հիմնախնդիր, թէ նախագահի սիրելի կատուի առողջական վիճակը: Մամլոյ քարտուղարներ կան նաեւ բոլոր միւս պետական հիմնարկներում, որոնք էլ հէնց պատասխանատու են նրա համար, ինչը կոչուում է պետական քարոզչութիւն, այն է՝ այս կամ այն հարցերի շուրջ պետական մարմնի տեսակէտը տարածելը ու կառավարութեան գործողութիւնները հասարակութեան աչքում ցանկալի տեսքով ներկայացնելը: Աւելորդ է ասել, որ իրենք՝ Միացեալ Նահանգների նաեւ բոլոր ժողովրդավարական երկրներին պետական պաշտօնները յաճախակի հիւր են հեռուստապատասխաններին: Մեր հարեւան վրաստանի նախագահն, օրինակ, ամէն երկուշաբթի պարտադիր ելույթ է ունենում ձայնասփիւռով:

Մեր երկրում արդէն Լեւոն Տէր Պետրոսեանի օրօք ստեղծուեց մամլոյ քարտուղարների հիմնարկը: Սակայն միտաժամանակ պահպանուեց խորհրդային սկզբունքը, ըստ որի իշխանութիւնը պէտք է ունենայ իր լրատուամիջոցները, որոնք (այլ ոչ թէ պաշտօնապէս զրա համար կոչուած պետական ծառայողները) պէտք է ժողովրդին բացատրեն, այսպէս ասած, կուսակցութեան եւ կառավարութեան քաղաքականութիւնը: Արդիւնքում ունէինք եւ ունենք հետեւեալ պատկերը. Լեւոն Ղուրաբեանը (Վահէ Գարիշէյանը) հեռուստապատասխաններին երեւում ու նախագահի տեսակէտն աշխարհին յայտնում էր (է) մտաւորապէս երկու ամիսը մէկ: Փոխարէնը խաղաթը մէկ այլ գործով էր (է) զրազած Ալեքանտր Իսկանդարեանը (Տիգրան Նաղդալեանը), եւ ամէն օր՝ եւս մի քանի անձինք: Այսինքն նախագահի (վարչապետի, Ազգային ժողովի նախագահի, նախարարների եւ այլոց) մամլոյ քարտուղարների գործը մեծ մասնը կատարում են պետական լրատուամիջոցները, ինչը անհամեմատ աւելի ծանր բեռ է պիտուէին: Ու, իմ կարծիքով, կատարում են շատ աւելի վատ, քան կ'անէին մամլոյ քարտուղարները միայնակ:

Անհրժեշտ օրինակ: Մի քաղաքական գործիչ քննադատում է նախագահ Ռուպիթ Բոչարեանին: «Հայ յուր»-ը տալիս է մի հատուած նրա ելույթից, որից յետոյ բարախիկ աղկնկանք Ժամիր քարտի ետեւում ճուռողում է. «Յիշեցնենք, որ երկրի համար աւելի բարխորշ մի չըրջանում նախագահն ասաց, որ ինքն այն մարդը չէ, ում հետ կարելի է խօսել վերջնագրերով»: Այսպէս ասած՝ «կանգնեց նախագահի թասիւրին»: Մի թէ նախագահն իսկապէս հաւատում է, որ սրա շնորհիւ ժողովուրդը աւելի վստահութեամբ ու համակրանքով կը լցուի երկրի ղեկավարի նկատմամբ: Մի թէ պարզ չէ, որ ղեկավարի հեղինակութիւնը բարձր պահելու լաւագուտն ձեւն այն է, որ բոլոր հարցերին ու քննադատութիւններին պատասխան տայ կամ անձամբ ինքը, կամ իր պաշտօնական ներկայացուցիչը՝ (իր «երեսնը») մամուլի քարտուղարը: Պատասխանի հանգիստ եւ արժանապատուութեամբ, առանց էֆանագին քարոզների, թուտուտ ակնարկների ու ձանձրալի զրոյցների, այն ամէնէն, ինչը պետական մամուլն ու հեռուստապատութիւնը իրենց համար պարտադիր են համարում:

Իսկ զրա համար ամենեւին անհրաժեշտ չէ ունենալ «գրպետի» լրատուամիջոցներ: Իրօք, դիցուք չկան այլ պիտիք: Ի՛նչ է իշխանաւորները վախենում են, թէ իրենց խօսքը չի՞ հասնի ժողովրդին: Մի թէ ոչ պետական ու նոյնիսկ ընդդիմադիր լրատուամիջոցները չեն հաղցազրոյց հեռագրակէ կամ տպագրել: Այն էլ ի՛նչպէս կ'ուզենան՝ իրար ոտք կը տրորեն, որպէսզի ժողովուրդը առաջին հերթին իրենց դիտի, կարդա, լսի: Մի թէ նրանք կը խոչընէ հրապարակել երկրի ղեկավարների մամլոյ քարտուղարների յայտարարութիւնները: Ընդհակառակը՝ միմեանց ձեռքերից կը խլելին: Կարող է ինչ-որ բան աղաւաղել: Բացառուած չէ, բայց զրա համար կայ մամուլի օրէնք:

Կարծիք կայ, որ երկրի ղեկավարները նախընտրում են պետական լրատուամիջոցները, քանզի վախենում են, որ ոչ պետականները կը տան «անցանկալի» հարցեր: Բացառուած չէ, ի հարկէ, սակայն, գոնէ իմ անձնական տպաւորութիւնն այն է, որ առեւտուած մեր ներքին նախագահն ու վարչապետը տահճ հարցերից վախեցողներին չեն: Երկուսին էլ լրագրից տեսել ենք ասուլիսներում կամ էլ պարզապէս ոտքի վրայ լրագրողներին «զոհհին» դիմակայելիս: Ու դարձեալ պարզից պարզ է, որ երկրի ղեկավարի հեղինակութիւնը բարձր կը լինի ոչ թէ այն ղէպքում, երբ նրան հարցեր տուողը սիրահարուած հայեացքով նրան նայող ու նրա ամէն մի խօսքի հետ զուգուց տարմուրացնող նիթական է: Նա անհամեմատ կը շահի, երբ կը կարողանայ արժանի պատասխաններ գտնել անկախ լրագրողի կծու հարցերին, ցանկալի է՝ ուղիղ եթերում:

Չէ, որ կողմից էլ նայենք, պարզ չէ, թէ ինչ կարիք կայ ուսուցչիներն ու բժիշկներն բերանից կտրել մեր առանց այն էլ սակաւ պիտուածական միջոցները ու պահել պետական լրատուամիջոցների գործող համակարգը:

ԱՊԱՔԱՂԱՔԱԿԱՆԱՅԻՄ ՅԱՆՈՒՆ ԱՊԱԿԱՅԻ

Այսպիսով, պետական լրատուամիջոցների առկայ համակարգը ապօրինի է, վնասակար պետական քարոզչութեան տեսակէտից ու քանի որ մեր ճեղքաւոր պիտուածէնից զգալի միջոցներ է բաժնում, ապա վնասակար է նաեւ գուտ նիթական առոււոր: Կարճ ասած՝ պարզապէս անտարմարանական: Իմ կարծիքով, պետական լրատուամիջոցների համակարգը պէտք է փոխուի հետեւեալ կերպ:
Ամէնից առաջ պէտք է ամբողջութի սկզբունք՝ պե-

տական լրատուամիջոցները պէտք է զրադուեն լրատուական պիզնիսով, այսինքն պէտք է հետեւեն շահօյթ ստանալու նպատակ, քանի որ նրանք առանց այն էլ նպատտ են ստանում հարկատուներից: Դա նշանակում է, որ պետական լրատուամիջոցներում պէտք է արգելուի գովազդ տեղադրելը, ինչպէս Մատենադարանում չի տեղադրում սքրիփթիզ-պար: Պէտք է հեռարձակուեն նաեւ վիճակախաղեր ու նման այլ առետրային միջոցառումներ. դա առետրային լրատուամիջոցների հացն է:

«Հայաստանի Հանրապետութիւն»-ի տիպի պաշտօնաթերթեր անհրաժեշտ չեն: Իր պաշտօնական փաստաթղթերը հրապարակելու համար պետութիւնն ունի յատուկ հրատարակութիւն՝ «Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական տեղեկագիր»: Մնացած ամէն-նօրեայ, պետութեան կարծիքով կարեւոր լուրերը միանգամայն կարելի է հանրութեանը հասցնել ոչ պետական լրատուամիջոցներով: Ծայրայեղ ղէպքում, եթէ պետական մարմինն անհրաժեշտ է գտնում որեւէ պաշտօնական հարողրագրութեան լրիւ ու տառացի հրապարակումը, կարելի է տպագրել ոչ պետական թերթ-թիւում շատ աւելի էֆանց ցուով, պարզապէս թերթին վճարելով, ինչպէս գովազդի համար: Իսկ «Հայաստանի Հանրապետութիւն»-ի վրայ կատարուող ծախսերի փոքր մասն իսկ բաւական կը լինի «Կանչ» մանկական թերթ-թիւ վերակենդանացնելու համար:

Մասնապէս կարիք չկայ պիտուէական միջոցների ծախսել պետական լրատուական գործակալութիւն պահելու համար: Այսօր «Արմէնփիւս»-ը չի կատարում որեւէ լրատուական գործունէութիւն, որն արդէն «ծածկուած» չլինի Հայաստանում գործող առուուացն չորս ոչ պետական լրատուական գործակալութիւններով:

Պետական ձայնասփիւռ եւ հեռուստատեսութիւն ունենալն առնուազն ցանկալի է (եթէ պիտուեն դա ներում է), բայց նրանք պէտք է զրադուեն լրատուութեամբ ու քաղաքական քարոզչութեամբ: Ինչպէս ասացի վերեւում, այդ գործերն աւելի մեծ յաջողութեամբ կարելի է անել առանց ուսուցչիների ու նպաստառուների զբաղակցումը մտնելուն: Նրանք, ումից ոչ կախուտ են, թող կանոնաւոր նայեն «Հայուր»-ը, «Օրակարգ»-ը կամ «Խորհրդալրակական Ժամ»-ը (ըստ հուլիանի» որոշ քաղաքական գործիչների գովազդ պետական պիտուէի հաշուին), ու իրենց հարց տան: Եւ թէ այս փողոքին պետութիւնն աւելի օգտակար կիրառութիւնն չէր կարող գտնել: Իսկ պետական ձայնասփիւռն ու հեռուստատեսութիւնը պէտք է զրադուեն ոչ թէ աւօրեայ, այլ մշտական կարեւորութիւն ունեցող հարցերով՝ մշակոյթ-թիւ, կրթութեամբ, գիտութեամբ, ազգային արժէքների քարոզչութեամբ ու բարձր ճաշակի արժատաւորմամբ: Նրանով, առանց ինչի անհնար է երկրի հոգեւոր կեանքն ու ինքնութիւնը, ու ինչը պիզնիսի առարկայ չի կարող դառնալ, քանի որ, ի տարբերութիւն մարտափիւմերի ցրեազրման, եկամուտ չի բերում: Թերեւս Ազգային հեռուստատեսութիւնը կարող է մի փոքր փող աւելատել (ինչպէս Մատենադարանը կարող է իր այցելուներից, որպէս թանգարան, մի փոքր գումար գանձել) նրանով, որ օրուան որոշ ժամերին իր հարողրատու կարող է հեռարձակել միւս ոչ պետական հեռուստալիքների լրատուական թողարկումները: Օգուտը կրկնակի կը լինի. նախ՝ այդ թողարկումներում կը լինի նաեւ ողջ պետական քարոզչութիւնը, եւ յետո՞ւ մարդերի բնակիչների կեանքը աւելի հետաքրքրական կը դառնայ, քանի որ նրանց մեծ մասը պատկերացում չուուն, որ Հայաստանում Ազգայինից բացի այլ հեռուստատեսութիւններ էլ կան:

Երկրի պաշտօնական ժամանակագրութիւնը պահելու ինչիւրը (ինչը նոյնպէս բերում է ի պաշտպանութիւն պետական լրատուամիջոցների գոյութեան) պէտք

Հիրանանեան Մամուլ

ՄԵՆԵ ԽՐԱՅԷԼԻ ՇԵՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒՂՍԱԿԱՐԱԿԱՆ ԴԱՇԽԵԼԵՐ
ՄՏԵՂԾԵԼՈՒ ԶԵՆԸ ԶԳՏԻՐ

ԹՈՒՐԵՒՈՅ ԴԵՄՊԱՆ ՆԱԶԻՍ ՏՈՒՍԼՈՒ «ՔԻՖԱՇ ԱՐԱՊԻ»ԻՆ, «ԱՐԱՔԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ԸՇՏ ԱՄԵՆԵՆ ԼԱԲ ԲԱՐԵԿԱՍԱԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՅԱՆՁՆԱՌՈՒ ԿԸ ՄՆԱՆԸ»

**Ստորոն կու տանք Լիբանանի մեջ Թուրքիոյ դեպքան
Նազիվ Տուվուրի «Քիֆաշ Արապի» քերթն տուած
հաղագրողին հատուածները:**
**Հարցազրույցին մեջ պարզապէս հարցազոտուն կը փո-
խանք թրական յետադուր խնդրոյ առարկայ հարցե-
րուն շուրջ:**

ՀԱՐՑՈՒՄ.- Նախապէս Անգարա եւ Պէյրոս փո-
խադարձ փորձեր կատարեցին քաղաքական, տնտեսա-
կան եւ առեւտրական յարաբերութիւններուն համա-
կարգ մը ստեղծելու համար. որքանո՞վ այս փորձերը
իրենց նպատակներուն հասան: Ի՞նչ պիտի կը ներկա-
յացնէք յիբանանեւթրքական այժմու յարաբերութիւն-
ները:

ՊԱՏԱՍԻԱՆ.- Լիբանան եւ Թուրքիա բարեկամ եր-
կիրներ են: Մենք մեծ կարեւորութիւն կու տանք եր-
կու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու զար-
գացման: Իմ կողմէս եւ առաւելագոյն ճիշդ ի գործ կը
դնեմ թափ տալու այս յարաբերութիւններուն՝ բոլոր
մարզերուն մէջ: Եւ մեկնելով Լիբանանի մէջ ունեցած
իմ պարտաւորութիւններէս՝ կը քննարկեմ յարաբերու-
թիւնը եւ Թուրքիոյ միջեւ քաղաքական կամ տնտեսա-
կան հարցեր չկան: Մենք լիբանանեան իշխանութիւն-
ներուն ներկայացուցած էինք կարգ մը առաջարկներ,
որոնք կը միտին զարգացնելու եւ բարեկամելու յարա-
բերութիւնները՝ իրական կարգաւորելու կարգաւորելու
միջոցով: այս առաջարկներէն կարելի է յիշել.

Ա.- Համաձայնագրի նախագիծ մը, որ երկու եր-
կիրներու մէջ կը պաշտպանէ ներդրումները. այս նա-
խագիծը յանձնուեցաւ լիբանանեան իշխանութիւննե-
րուն:

Բ.- Առաջարկի նախագիծ մը ներդրումներու
պաշտպանութեան եւ քաջութեամբ շուրջ:

Աւելին. Թուրքիա առաջարկեց Թուրքիա-լիբանանե-
ան տնտեսական յանձնարարութիւններու երկրորդ
գումարումը: Յանձնարարութիւնը ժողով չէր գումարած
1996էն ի վեր: Ասկէ մեկնելով՝ կը կարծեմ, որ այս յանձ-
նարարութիւնը ժողովին գումարումը թափ պիտի տայ երկ-
կողմանի յարաբերութիւններուն՝ տնտեսական եւ
առեւտրական մարզերուն մէջ: Նոյնպէս կը նախատե-
սենք մշակութային փոխանակման ծրագրի մը շուրջ
համաձայնութիւն մը երկու երկիրներուն միջեւ,
Օգոստոս 1959ին ստորագրուած մշակութային համա-
ձայնագրի վերադարձնելու մասին տակ: Թուրքիա
այս հարցով առաջարկի նախագիծ ներկայացուց:

Այս բոլորին կողքին, մենք Լիբանանի զիջատնտե-
սութեան նախարարութեան ներկայացուցիչը նաեւ
զիջատնտեսական համագործակցութեան շուրջ առա-
ջարկի նախագիծ մը:

Եւ ինչպէս ըսի, Թուրքիա առած է նախաձեռնու-
թիւնը եւ կը միտն աշխուժացնէ յարաբերութիւններու զօ-
րացման: Կը կարծեմ, որ երկու երկիրներն ալ ունին մեծ
ներուժ, զոր պէտք է օգտագործել, եւ ես վստահ եմ, որ
այժմու յարաբերութիւնները պիտի զարգանան յառա-
ջիկայ մասիններուն:

Հ.- Լիբանանցիներուն յիշողութեան մէջ ոչ պայ-
ծառ պատկերներ կան նախկին օսմանական ժամանա-
կաշրջանին մասին: Կարելի է ըսել, թէ հանրապետա-
կան Թուրքիան լիբանանցիներուն հետ յարաբերու-
թիւններով կրցաւ շրջանցել կայսերական Թուրքիոյ
ժամանակ ստեղծուած բարդութիւնները եւ վերանա-
տառել սերտ յարաբերութիւններ անոնց հետ:
Արդեօք կարելի է օրինակներ տալ ասոր մասին:

Պ.- Ես ձեր կարծիքը չեմ բաժնորդ եւ համաձայն չեմ,
որ լիբանանցիներն ու արաբները բացասական կարծիք-
ներ ունին օսմանցիներուն մասին: Թուրք ժողովուրդը
բարեկամական անկեղծ զգացումներ կը տածէ լիբա-
նանցիներուն նկատմամբ, եւ մեր կողմէն մենք կան-
խտարամադրուածութիւն չունինք Լիբանանի կամ որեւ-
է արաբական երկրի նկատմամբ, որովհետեւ մենք
չորս հարիւր տարուան միացեալ պատմութիւն մը ու-
նինք, կը բաժնեկիցեմք միեւնոյն արժէքները, աւանդու-
թիւնները եւ մշակոյթը: Մեր անկեղծ փափաքն է յարաբե-
րութիւններուն թափ տալ ոչ միայն Լիբանանի, այլ նաեւ
բոլոր արաբական երկիրներուն հետ: Մենք բոլոր
արաբները կ'ընդունինք իրենց եղբայրներ. սակայն,
եթէ գոյութիւն ունին բացասական կարծիքներ Թուրք-
իոյ եւ անոր ժողովուրդին նկատմամբ, ապա անոնք
անձնական շահի համար կարգ մը կողմերու ընկերու-
թեան մէջ ներարկած զրգուիչ քարոզչութեան արդիւնք
է:

Ես վստահ եմ, որ լիբանանցի ժողովուրդը գիտէ, թէ
ո՞վ է օգտուողը, եւ որոնք են պատասխանատուները
բացասական կեցուածքներուն: Բարեկամութիւնը եւ
սպասելիութիւնը, զորս զգացի մինչեւ հիմա, կը
փաստեն, թէ լիբանանցի ժողովուրդը Թուրք ժողովուր-
դը կ'ընդունի իրենց եղբայր:

Հ.- Իսրայէլեւթրքական յարաբերութիւնները, մա-
նաւանդ զինուորական եւ ապահովական մարզերուն
մէջ, արաբական եւ իսրայէլական աշխարհին եւ մանա-
ւանդ զրացի երկիրներուն մտափոխութեան պատճառ
կը հանգիստանայ: Այս յարաբերութիւնները այս քննա-
դատութեան տեղի տուած էին կարգ մը երկիրներու
կողմէ, ինչպէս Աւստրիա եւ ուրիշներ, որոնք կը նկա-
տեն, թէ այս յարաբերութիւնները վտանգաւոր են
իրենց համար: Ի՞նչ պիտի կարելի է բնութագրել Անգա-
րայի յարաբերութիւնները Թէյ Աւելի հետ ներկայիս:
Կը խորհի՞ք, թէ թրքական կառավարութեան հաւաս-
տիացումները բաւարար էին չբացանցելու իր արաբ դրա-
ցիներուն մտափոխութիւնները:

Պ.- Թոյլ տուէ՛ք, որ անգամ մը ես ըսեմ, որ Թուրք-
իոյ եւ Իսրայէլի միջեւ երկկողմանի յարաբերութիւն-
ները մեծ չափով կեդրոնացած են տնտեսական յարա-
բերութիւններուն վրայ, իսկ ինչ կը վերաբերի մեր յարա-
բերութիւններուն տնտեսական երեսին, ապա ան կը

յենի մարզումի մարզին մէջ համազործակցութեան հա-
մաձայնագրի մը վրայ. ան թեքելիք համաձայնագիր
մըն է եւ ուղղուած է որեւէ երրորդ երկրի մը դէմ:
Աւելցնեմ, որ այս յարաբերութիւնները չեն ձգտիր
ստեղծելու ռազմավարական ընդլիճ զինուորական դա-
շինքներ: Զինուորական համագործակցութեան սահմա-
նումը իրենց դաշինք սխալ է: Գոյութիւն չունի ոչ մէկ
երեւոյթ, որ արաբները եւ իսրայէլները կը մղէ իրենք վե-
րենք նկատելու այս համաձայնագրի թիրախները:

Թուրք-իսրայէլեան յարաբերութիւններուն ընդլիճ
ու բովանդակութիւնը սխալ հասկցուեցաւ, իսկ եթէ
նոյնիսկ հարցը այս ձեւով հասկնուի, չի նշանակեր, թէ
ան կ'արտացոլային իրականութիւնը:

Թուրքիա մինչեւ հիմա 30 երկիրներու հետ ստոր-
գրած է զինուորական համագործակցութեան համա-
ձայնագրեր: Անոնց մէջէն 9 երկիր արաբական եւ իս-
րայէլական են՝ Եգիպտոս, Յորդանան, Լիպիա, Սէուտա-
կան Արաբիա, Գոնէլթ, Արաբական Միացեալ Էմիրու-
թիւններ, Թունիս, Իրաք եւ Իրան:

Թուրքիա համագործակցութեան այս համաձայնա-
գիրը ստորագրեց միայն երբ Եգիպտոս եւ Յորդանան
խաղաղութեան համաձայնագրերն ու ստորագրեցին եւ
պաղտատիցիները բանակցեցան Թէյ Աւելի հետ:

Աւելին. Թուրքիա առաջարկեց նոյն համաձայնագրի-
ն ստորագրել նաեւ Լիբանանի հետ:

Թուրքիա ուրախ է Միջին Արեւելքի հետ իր ունեցած
պատմական, մշակութային եւ աւանդական արմատա-
ցած կապերով եւ ան յանձնարած է արաբական երկիր-
ներու եւ ժողովուրդներու հետ բարեկամական ամէնէն
լաւ յարաբերութիւնները հաստատելու մէջ:

Թուրքիա մօտէն կը հետեւի շրջանի իրադարձու-
թիւններուն, ինչպէս նաեւ պաղտատիցիներուն եւ իս-
րայէլացիներուն միջեւ ծագած հարցերուն: Ան պիտի
շարունակէ աջակցել այն ջանքերուն, որոնք կը միտին
խաղաղութեան գործընթացի շարունակման:

Հ.- Գոյութիւն ունի Հայկական Հարց մը եւ անոր
նկատմամբ օսմանական ժամանակաշրջանէն ժամա-
նակաշրջանի փոփոխութեան տեղումները մը: Մինչեւ
հիմա տեղի չունեցաւ տեսակետներու որեւէ մերձե-
ցում, որ ցոյց տար, թէ այս թղթածրարը պիտի փակ-
ւի երկու կողմերուն միջեւ, մանաւանդ որ հայկեր չեն
հրաժարած իրենց պահանջքէն, որ Թուրքիա նկայի
այն շարքով. որոնց իրենք են Երազուհեան: Ի՞նչ է
մեր կարծիքը:

Պ.- Նախապէս այս հարցին մասին խօսած եմ լրա-
տական միջոցներուն մէջ: Մենք չենք կարծեմ, թէ գո-
յութիւն ունի այսպէս կոչուած հայերու գնդակահար-
ման ընդհանրութիւնը, այսինքն՝ ինչ որ «ցեղասպանութիւն»
(նկատարար) կը կոչուի: Բնաշնչում կը նշանակէ ամբողջ
ազգ մը ցրուելը եւ ջնջելը: Այս բանին սահմանումը
կը նշանակէ «ժողովուրդը մը ջնջելու կամ ցրուելու»,
ինչպէս որ Հիթլէր վարուեցաւ հրեաներուն հետ: Այս-
որ Գոյութիւն մէջ կայ մեծ եւ հարուստ հայ գաղութ մը,
որ ոչ մէկ ձեւով վտանգի կ'ենթարկուի: Ես ապրած եմ
թաղի մը մէջ, որուն բնակիչները մեծամասնութեամբ
հայեր եղած են, եւ անձնագրէս տեսած եմ, թէ անոնք
իրենց առօրեայ կեանքը հանգիստ, երջանիկ եւ ապա-
հով կերպով կը վարեն:

Տեղի ունեցած դէպքերը եկան իրենց հետեւանք պա-
տերազմին եւ դժուար օրերուն, որոնք մեծ տագնապեցան
բիւրոսի բոլոր ժողովուրդները՝ Թուրքիա, արաբներ,
չիլիոսներ եւ հայեր: Իրականում այն ատեն օգտագործե-
ցին Օսմանեան կայսրութեան դժուար կացութիւնը, մի-
ջամտեցին եւ ազգային հաւաքականութիւններ հրահր-
եցին կայսրութեան դէմ: Գժարատարը հայկական
կարգ մը կողմեր այն ատեն գործակցեցան Թուրքիոյ
հետ:

Հայերը ջարդերու չենթարկուեցան, այլ իրենց բնա-
կութեան վայրերէն տեղահանուեցան ռազմավարական
- ապահովական պատճառներով: Կարելի էր որ անոնց-
մէ մաս մը տեղահան գործողութիւններուն ընթացքին
սպանուեցան բնական երեւոյթներու, տեղափոխու-
թեան հետ կապուած վտանգներու եւ այլազան պատ-
ճառներով, որոնք հաւասարապէս ենթարկուեցան նա-
եւ Թուրքիոյ, արաբները եւ չիլիոսները:

Ասոնք են պատմական ճշմարտութիւնները, եւ մենք
կ'ողջունենք բոլոր օսմանեան արխիւր ուսումնասիրել
ու գործողները: Այս արխիւր տրամադրուած է անոնց,
որոնք կ'ուզեն որեւէ բան գիտնալ ենթադրեալ ջարդե-
րուն մասին: Միւս կողմէ, մենք կը սպասենք, որ հա-
յերն ալ իրենց կարգին բանան իրենց արխիւները, ինչ
որ մինչեւ հիմա տեղի չէ ունեցած: Ես անձնագրէս կը
կարծեմ, որ եթէ անոնք բանան իրենց արխիւները, ի
յայտ պիտի գան իրենց չափազանցութիւնները: Այն, ինչ
որ կ'ըսուի այս հարցին մասին, ճիշդ պատմութիւնը չէ:
Ասոր համար ալ ոեւէ մէկը թող չըսուայ, որ Թուրք-
իոյ այս հարցով որեւէ զիջում կը կատարէ: Հայկական
Միւրաքը կրցաւ բոլոր խորհրդարաններուն ճանչնել
այսպէս կոչուած Հայկական Ցեղասպանութիւնը եւ բո-
լորն ալ կը յիշեն, թէ ինչպէս Թուրքիա զիջողեց այս
գծով ճշմարտներուն, որովհետեւ ան գիտէ, որ անոնք
անճիշդ եւ անարդար են:

Եթէ հայկական յիշողութիւնը կը վերակենդանացնէ
այնպիսի դէպքեր, որոնք տեղի ունեցան մօտ 75 տարի
առաջ, ապա մեր յիշողութիւնը տակաւին թարմ է հայ-
կական աւաքելիական խմբակի մը ձեռքով մեր 40 իրա-
նագէտներու նահատակութեան գծով: Այս դէպքերը
սկսան մօտաւորապէս 30 տարիներ առաջ:

Վերջապէս, ես կոչ կ'ուղղեմ զուրս ելլել անցեալէն
եւ անոր զժախտութիւններէն, եւ միասնաբար նայլնք
մեր գաւազաններուն ապագային, որովհետեւ որքան որ
«պղծեմք» անցեալի տեսողութիւններ մէջ, գոցէ եւ զը-
նենք ռազմաթիւ սարսափելի երեւոյթներ աշխարհի բո-
լոր մարդոց համար:
Պէտք է շրջանցենք այս վիճակը, որովհետեւ, աղմու-
կի եւ հարցերու հրահրման շարունակութիւնը ոչ մէկ
օգուտ կընայ ունենալ:

ԳԻԻՆԱԳԻՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ ԶԳՈՒՇԱԲՈՐ ԿԵՐՊՈՎ ԿԸ ՇԵՏԵԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ԲԱՅԼԵՐՈՒՆ

Տնտեսութիւնը կը կազմէ հիմնական
օղակ մը ներքին դիւնագիտական հե-
տաքրքրութիւններու ծիրին մէջ, այն
օրէն ի վեր, երբ վարչապետ Ռաֆիք Յա-
րիրի վերադարձաւ իշխանութեան, եւ
նախարարաց խորհուրդը սկսաւ տալ
որակական որոշումները, սկսեալ օգա-
յին բաց ճամբաներէն, անցնելով մաքսե-
րու նուազեցում, հասնելով կարգ մը
մարզերու ապապետականացման շուրջ
լուրջ խօսակցութեան:

Լիբանանեան կառավարական պատ-
ւիրակութեան Պաղտատ կատարած այ-
ցելութեան տեղի իրաք տնտեսա-
կան բացուածութեան քաղաքականու-
թիւնը, ապա Լիբանանի, Եգիպտոսի եւ
Սուրիոյ միջեւ բնական կազմ փոխադր-
ման հասկացողութեան յուշագրի ստոր-
գրութիւնը լուրջ հետաքրքրութեան
առարկայ էին Պէյրոսի այցելած պատուի-
րակութիւններուն կողմէ «Ճշդելու հա-
մար այն քաղաքական եւ տնտեսական
փոփոխութիւններուն ծաւալը, որուն
կ'ենթարկուի այս երկիրը, ինչպէս նաեւ
շրջակայ երկիրները»:

ԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ ԱՆՅԱՐԳԵԼՆԵՐ

Լիբանան այս փոփոխութիւններուն
կը վերաբերի գաղաշուր տեղեկատուա-
կան մօտեցումով, որովհետեւ անոնց ար-
դիւնները ապագային յայտնի պիտի
դառնան, եւ ներկայիս տիրող կացու-
թիւնը չ'օգնէր շրջանցելու գաղաշուր
անցարգելները խաղաղութեան գործըն-
թացի դիմագրաւած տեղատուութեան,
պաղտատիցեան ինքնիշխանութեան
անցարգելները խաղաղութեան գործըն-
թացի դիմագրաւած տեղատուութեան,
պաղտատիցեան ինքնիշխանութեան
անցարգելները խաղաղութեան գործըն-
թացի դիմագրաւած տեղատուութեան:

Ասոր համար ալ, հիմնուելով այլեւայլ
տուեալներու վրայ, լիբանանեան դիւ-
նագիտական շրջանակները կ'ըսեն, որ
գործարարութիւնը քայլերը խոստումալից
են անխուսափելի են, սակայն պէտք է ու-
սումնասիրուած են իրագործելի ըլլան,
որովհետեւ կը գործադրուի «ակամա-
տոր դաշտերու» մէջ:

Այս շրջանակները կը մատնան, որ
ատեն մը ի վեր իրաքի հետ յարաբերու-
թիւններու թրքածրարը պաշտօնապէս
բացուած էր առեւտրականներու եւ գոր-
ծարարներու ճնշումներուն պատճառով:

Այս շրջանակները կը հաստատեն, որ
վերջին երեք տարիները շատ կարեւոր
տնտեսական ցուցանիշներ կ'արձանա-
գրեն. լիբանանցի արդիւնաբերողը կը
զգայ, թէ իր արտադրութեան համար որ-
քան կարեւոր է իրաքի շուկան, եւ թիւե-
րու լեզուն ինք միայն է, որ կը խօսի այս
մարզին մէջ, ինչ որ նախարարաց խոր-
հուրդը մեծ տեղեկութիւն կառավարական
պատուիրակութիւնը մը Պաղտատ այցե-
լելու համար: Այս այցելութեան նպա-
տակն էր թափ տալ տնտեսական - առ-
եւտրական համագործակցութեան եւ
զայն հասցնել բաւական յառաջացած
մակարդակի մը:

ԴԻՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արդեօք այս քայլը կը կազմէ՞ սկիզբ
մը վերահաստատելու համար դիւնա-

գիտական յարաբերութիւնները Պէյրոսի
եւ Պաղտատի միջեւ, իրաքի այլախի
Թալէպ Սուէլի Թամհիի Այն Թիմի մէջ
սպանուելէն ետք:

Գործնական գետնի վրայ, կ'ըսեն այս
շրջանակները, տնտեսական բացուածու-
թիւնը անպայման օր մը պիտի առաջնոր-
դէ քաղաքական եւ դիւնագիտական յարա-
բերութիւններու վերահաստատման
այս կը հաստատէ իրերու տրամաբանու-
թիւնը:

Սակայն պաշտօնական գետնի վրայ
այս հարցը լուրջ կերպով քննարկման չէ
դրուած հետեւեալ պատճառներով:

Ա.- Լիբանան, որ մեկնելով իր շահե-
րէն իր կեցուածքը ամուր կերպով համա-
պատասխանեցուցած է Սուրիոյ կեց-
ւածքին, Իրաքի հետ տնտեսական բաց-
ուածութեան քայլեր չորդեգրեց, բացի երբ
Դամասկոս ինք նախաձեռնողը հանդի-
սացաւ:

Ասկէ մեկնելով Լիբանան չի կրնար վե-
րահաստատել իր դիւնագիտական յարա-
բերութիւնները Պաղտատի հետ, դա-
մասկոս առաջ, հակառակ անոր որ վեր-
ջինս իր յարաբերութիւնները խաղած էր
իրաքի հետ Բուէյթը գրաւելուն պատճա-
ռով, մինչդեռ Լիբանան այս յարաբերու-
թիւնները խաղած էր Պէյրոսի հետ իրաքե-
ան դեպքանատան մէջ աշխատող իրաք-
ցի դիւնագիտներու կազմակերպած
իրաքցի այլախիսի սպանութեան պատ-
ճառով:

Բ.- Լիբանան չի կրնար ուրանալ այն
բոլոր դրամական, քաղաքական եւ բա-
րոյական աջակցութիւնը, գոր Բուէյթ
տրամադրած էր (եւ կը շարունակէ տրա-
մադրել), վերաճողութեան համար Լիբա-
նանի ենթակառուցվածքները իրագործելու
համար անհրաժեշտ եւ կենսական ծրա-
գիրներ, մանաւանդ որ այս աջակցու-
թիւնը տակաւին ի գորու կը մնայ այլա-
զան մարզերու մէջ:

Միւս կողմէ, սակայն, Բուէյթ չարագե-
լից Լիբանանի տնտեսական բացուածու-
թիւնը դեպի Իրաք, այլ քաղաքացիական
համար գործադրելու համար այսպիսի
քայլեր. «Մինչեւ այն ատեն, որ բազմա-
թիւ արաբական երկիրներ կ'օգտուին, ին-
չ» Լիբանանի բաժին մը պիտի չելլէ այս
օգուտէն»:

Գ.- Գոյութիւն ունի նաեւ Սիւրիոյ
Լահանգները, եւ այդ երկրի գործօն ու
հանգուցային դերակատարութիւնը
շրջանին եւ Ծոցի տագնապին մէջ:

Սեկնելով վերոյիշեալ եւ այլ նկատա-
ռումներ՝ յստակ էր, որ պաշտօնական
կեցուածքը, որ ընկերացաւ լիբանանե-
ան կառավարական պատուիրակու-
թեան Իրաք կատարած այցելութեան,
շատ յստակ էր միայն քարիւղի եւ
տնտեսական մարզի մէջ բացուածու-
թեան բնոյթին վրայ շեշտելու գծով...
դիւնագի

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ՊԱՍՔԵԹՊՈԼ ԼԻԲԱՆԱՆԻ
ԱՆՈՅԵՆՈՒԹԻՒՆ

ՌԻԱՏԻ - Հ. Մ. Ը. Մ.՝ 97-85

Լիբանանի պատերազմի տղոց ախոյեանութեան 7րդ հանգրուանի մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ. ի ներկայացուցչական կազմը 97-85 (կիսախաղ՝ 53-40, ի նպաստ մրցակիցին) արդիւնքով պարտութիւն մը կրեց Ռիատիէն, այս վերջինին դաշտին վրայ:

Հ. Մ. Ը. Մ. ի յաջորդ մրցակիցը պիտի ըլլայ Անդրանիկ մրցումը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 23 Դեկտեմբերին Հ. Մ. Ը. Մ. ի «Թնճուկեան» դաշտին վրայ (Մըզհէր), ժամը 15:30ին:

ԱՅՍՕՐ՝ Հ. Մ. Ը. Մ. ԱՆԹԻԼԻԱՍ - ԷՕ. ԷՆ. ՊԵ.

Լիբանանի աղջկանց պատերազմի Ա. դասակարգի ախոյեանութեան 4րդ հանգրուանի մրցումներուն, այսօր, Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս իր դաշտին վրայ (Մըզհէր) կը հիւրընկալէ ԷՕ. ԷՆ. ՊԵ. ն. մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 19:00ին:

ԼԵՎԱՄԻ ՇԱԲԱԹԱՎԵՐՁԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՄԻ յանձնախումբին կողմէ կազմակերպուած մինչ ֆուտբոլի մրցումները այս շաբաթավերջին տեղի պիտի ունենան Մըզհէրի «Թնճուկեան» դաշտին վրայ: Թեքնիք պատճառներով դաշտին վայրը փոփոխութիւն կրած է եւ փոխանակ Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճի դաշտին վրայ տեղի ունենալու, անոնք այսուհետեւ տեղի պիտի ունենան Մըզհէրի մէջ:

Ստորեւ՝ մրցումներուն յայտագիրը.

ՇԱԲԱԹ, 23 ԴԵՍՏԵՄԲԵՐ

- Ս. Խանամիրեան - Ճեմարան (պղտիկ), ժամը 14:00ին
- Արեւստից - Շամլեան Թաթիկեան (մեծ), ժամը 14:30ին
- Լ. եւ Ս. Յակոբեան - Թոչնոց Բոյն (պղտիկ), ժամը 15:10ին
- Ս. Հոփսիսիմեանց - Ս. Խանամիրեան (մեծ), ժամը 15:40ին
- Ս. Ազնէս - Մեարոպեան (պղտիկ), ժամը 16:20ին
- Յովակիմեան - Դպրեվանք (մեծ), ժամը 16:50ին
- Թորոսեան - Ս. Հոփսիսիմեանց (պղտիկ), ժամը 17:30ին:

ՊԻՐԱՆԻ, 24 ԴԵՍՏԵՄԲԵՐ

- Արզարեան - Կ. Բ. Վ. (պղտիկ), ժամը 14:00ին
- Ճեմարան - Կ. Բ. Վ. (մեծ), ժամը 14:30ին
- Շամլեան Թաթիկեան - Ս. Բառասնից Մանկանց (պղտիկ), ժամը 15:10ին
- Հայ Աւետ. (քաղաք) - Եղիշէ Մանուկեան (մեծ), ժամը 15:40ին
- Թրատ - Թորոսեան (պղտիկ), ժամը 16:20ին
- Մեարոպեան - Ս. Ազնէս (մեծ), ժամը 16:50ին:

ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

Անգլիոյ ֆուտբոլի Լիկայի բաժակի մրցաշարքի քառորդ աւարտականի մրցումներուն, Քրիսթալ Փալաս եւ Իփսուիչ պարտութեան մատնելէ ետք իրենց մրցակիցները, ապահովեցին կիսաաւարտական հանգրուանի իրենց տոմսերը: Յաղթանակ արձանագրող երկու կազմներն ալ սակայն դժուարութեամբ պարտութեան մատնեցին իրենց մրցակիցները, 2-1 արդիւնքով: Իփսուիչ յետ երկարամրցման միայն յաղթեց Մանչեսթըր Սիթիին, իսկ Փալաս, Մանչեսթըրի ղեկ տեղի ունեցած մրցումին իր յաղթանակի կողմը նշանակեց աւարտէն ուրբ վայրկեան առաջ:

Կիսաաւարտական հանգրուանի մրցումները, որոնք տեղի պիտի ունենան յառաջիկայ տարի Յունուար 10ին եւ 24ին, երբ ու դարձի դրութեամբ, Իփսուիչ իր մրցումը պիտի կատարէ Պիրմինկիմի դէմ, իսկ Փալաս՝ Լիվըրպոլի դէմ:

Միտլըվպորտի պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ իրենց ակումբին մաս կազմող արժանթինցի յառաջապահ Քարլոս Մարիանի, որ փորձերու ընթացքին վիրատուրուեցաւ, վեց շաբաթ պիտի բացակայի դաշտերէն:

18 տարեկան Մարիանիի, որ Պոքս Ժուսիտի միջոցով էր Միտլըվպորտի (փոխան՝ 1.5 միլիոն տոլարի), իր ակումբին հետ կատարած առաջին մրցումին (Նոյեմբեր 25ին) իսկ կարմիր քարտ մը ստացած էր (Պրետֆորտի դէմ):

ՊԱՍՔԵԹՊՈԼ ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՄԻՆՉ ՍԱՔՐԱՄԵՆԹՈ ՔԻՆԿՉ Կ'ԱՐՇԱԿԷ, ՇԻՔԱԿՕ ՊՈՒԼՉ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՆԱՐԱՆՁԵԼ

ԷՆ. ՊԻ. ԷՅ. ի երէկւան մրցումներուն մեծագոյն յաղթական եղաւ Սաքրամենթո Քինկը, որ իր դաշտին վրայ 106-72 արդիւնքով պարտութեան մատնեց Ուաշինկթըն Ուիլյարտը, արձանագրելով իր 18րդ յաղթանակը: Այսպիսով, իր կատարած վերջին 11 մրցումներուն, Ուիլյարտը կրեց իր 10րդ պարտութիւնը:

Քինկը մարզիկ Քրիս Ուեյլը իր նախկին ակումբին՝ Ուիլյարտի դէմ նշանակեց 19 կէտ եւ 11 ռիպաուսնոս:

Լոս Անճելըս Լէյքըրը դժուար բայց կարելու յաղթանակ մը արձանագրեց, երբ 81-79 արդիւնքով յաղթական վերադարձաւ Մայեմի Հիթի դաշտին:

Լէյքըրի մարզիկ Քոպէ Պրայընը նշանակեց 23 կէտ, իսկ անոր խմբակից Շաքիլ Օնիլ՝ 22 կէտ եւ 14 ռիպաուսնոս: Մայեմի մարզիկ Էնթոնի Մէյսըն նշանակեց 20 կէտ եւ 14 ռիպաուսնոս:

Իր կարգին յաղթանակ մը արձանագրեց Սան Անթոնիո Սփըրզ, 86-79 արդիւնքով պարտութեան մատնելով Հիուսթըն Ռոքեթը: Սփըրզի մարզիկ Թիմ Տանթըն նշանակեց 25 կէտ եւ 15 ռիպաուսնոս, մինչ մրցակից կազմին մարզիկներէն Հաքիմ Օլաճուան եւ Սթիւ Ֆրենսիս՝ 17ական կէտ:

Թորոնթո Ռեփրըրզի յաղթանակը կերտողը եղաւ Վինս Քարթըր, որ Եուրթ Ճեյփի դէմ մրցումին նշանակեց 33 կէտ, երբ անոր կազմը մրցումը աւարտեց 103-95 արդիւնքով: Ճեյփի մարզիկ Տոնի Մարշալ նշանակեց իր կազմին առաւելագոյն կէտերը (24 կէտ):

Ճեյփի Սթէյքհաուսի կողմէ նշանակուած 35 կէտերը բաւարար եղան, որ անոր կազմը Տիթթոնի Փիսթընզ



Լոս Անճելըս Լէյքըրի մարզիկ Քոպէ Պրայընը (թիւ 8)՝ Մայեմի Հիթի դէմ տեղի ունեցած մրցումին:

89-84 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց Ֆեօնիքս Սանկի դաշտին վրայ: Ֆեօնիքս մարզիկ Քիլիֆ Ռոպինսոնը նշանակեց 29 կէտ:

Յարդ միայն երեք յաղթանակ արձանագրած Շիքսօ Պուլզ կրեց եղանակի իր 22րդ պարտութիւնը, իր դաշտին վրայ 90-85 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆինիքս Սանկի դաշտին վրայ: Յաղթական կազմի մարզիկ Ռեճի Միլըր նշանակեց 22 կէտ, իսկ Պուլզի մարզիկ Էլթըն Պրէնտ՝ 17 կէտ:

Ստորեւ երկուսն մրցումներուն արդիւնքները. Թորոնթո Ռեփրըրզ - Եուրթ Ճեյփ 103-95 Արթուր Քոքս - Նիւ Եորք Նիքս 87-77 Լոս Անճելըս Լէյքըրզ - Մայեմի Հիթ 81-79 Սան Անթոնիո Սփըրզ - Հիուսթըն Ռոքեթ 86-79 Ինտիանա Փէյլըրզ - Շիքսօ Պուլզ 90-85 Տիթթոնի Փիսթընզ - Ֆեօնիքս Սանկ 89-84 Կոլորադո Սթըյք Ուորիըրզ - Միննեսոթա Վուլվզ 120-99 Մաքրամենթո Քինկը - Ուաշինկթըն Ուիլյարտ 106-72

Ստորեւ՝ դասաւորումը.

ԱՐԵՒԵՆԵԱՆ ՇՐՋԱՆ (Ատլանտեան գօտի)

	ՅԱՂԹ.	ՊԱՐՏ.
1.- Ֆիլադելֆիա Սիքսըրզ	18	6
2.- Նիւ Եորք Նիքս	15	11
3.- Մայեմի Հիթ	13	13
4.- Օրլանտո Մեյճիք	10	14
5.- Պոսթըն Սեյթիքս	9	15
6.- Նիւ Ջորպի Նեյթ	9	15
7.- Ուաշինկթըն Ուիլյարտ	5	20

(Կեդրոնական գօտի)

1.- Քիլիփիտ Քաւալիք	15	7
2.- Շարլոթ Հորնեթ	16	9
3.- Թորոնթո Ռեփրըրզ	13	12
4.- Միլուոքի Պաքս	12	12
5.- Ինտիանա Փէյլըրզ	12	13
6.- Տիթթոնի Փիսթընզ	11	14
7.- Արլանտա Հոքս	7	18
8.- Շիքսօ Պուլզ	3	22

ԱՐԵՄԵՆԵԱՆ ՇՐՋԱՆ (Միջարեւմտեան գօտի)

1.- Եուրթ Ճեյփ	17	8
2.- Տալաս Մալթրիքս	17	10
3.- Սան Անթոնիո Սփըրզ	15	9
4.- Միննեսոթա Վուլվզ	15	10
5.- Հիուսթըն Ռոքեթ	13	11
6.- Տեքսաս Նայթ	12	13
7.- Վանքուվըր Կրիպիլզ	7	17

(Նուրմալ ԳՕՏԻ)

1.- Մաքրամենթո Քինկը	17	6
2.- Փորթլենտ Թրէյլ Պլէյքըրզ	17	9
3.- Լոս Անճելըս Լէյքըրզ	18	9
4.- Ֆեօնիքս Սանկ	15	9
5.- Միլուոքի Սուփըրսոնիքս	13	12
6.- Լոս Անճելըս Քինկը	8	18
7.- Կոլորադո Սթըյք Ուորիըրզ	7	18

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը.

Նիւ Ջորպի Նեյթ - Պոսթըն Սեյթիքս Թորոնթո Ռեփրըրզ - Ինտիանա Փէյլըրզ Մայեմի Հիթ - Շարլոթ Հորնեթ Փորթլենտ Թրէյլ Պլէյքըրզ - Տալաս Մալթրիքս Եուրթ Ճեյփ - Ֆիլադելֆիա Սիքսըրզ Քիլիփիտ Քաւալիք - Սան Անթոնիո Սփըրզ Տիթթոնի Փիսթընզ - Տեքսաս Նայթ Սաքրամենթո Քինկը - Միլուոքի Սուփըրսոնիքս Ուաշինկթըն Ուիլյարտ - Վանքուվըր Կրիպիլզ Միննեսոթա Վուլվզ - Լոս Անճելըս Քինկըրզ

- ԻՆԻՌՆ ՊԵՐԼԻՆ ՀԱՍԱԻ ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆ - ՊՈՒՆՏՐՍԼԻԿԱՆ ՍԿՍԱԻ ԻՐ ՉՄԵՌՆԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԳԻՆ

Գերմանիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարքին քառորդ աւարտականի հանգրուանի մրցումներուն, ոչ արհեստավարժ Ինիոն Պերլին անակնկալ մը ստեղծեց եւ 1-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ա. դասակարգին մէջ պայքար մղող Պոլսուրը, ապահովեց կիսաաւարտական հանգրուանի իր տոմսը: Նախապէս միայն չորս ոչ արհեստավարժ կազմեր յաջողած էին հասնիլ այս հանգրուանը: Մրցումին «որբ» կոլը նշանակեց յետապահ Տանիէլ Էրնըման, այդ ալ վերջին վայրկեանին:

Չորս անգամ Գերմանիոյ ախոյեան հանդիսացած Շթուրթարթ յետ երկարագոյն ընթացքին միայն յաջողեցաւ 2-1 արդիւնքով պարտութեան մատնել իր մրցակիցը, շնորհիւ Իոան Վիլի Կանէյի նշանակած կոլին (96րդ): Նախապէս Քրասնիթի Պայքըրը նշանակած էր Շթուրթարթի կոլը, որմէ երկու վայրկեան ետք Սեպասթիան Քեյլ Ֆրայպուրկի հաւասարութեան կոլը:

Բ. դասակարգին մաս կազմող երկու կազմերուն Տուիպուրկի եւ Պորուսիա Մէոնշթընկաուպաի միջեւ տեղի ունեցած ճակատումը վերջ գտաւ ի նպաստ երկրորդին, որ 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, շնորհիւ Արիէ Վան Լէնթի նշանակած կոլին (67րդ՝ փենալթիով):

ԵՐԷՎՈՒՆ այս մրցումներուն կողքին տեղի ունեցաւ նաեւ 15րդ հանգրուանին յետաձգուած մրցում մը՝ Ունթըրհախիւնի եւ Վերտըր Պրեմընի միջեւ, որ վերջ գտաւ 0-0 արդիւնքով:

Այսպիսով, Պունտրայիկայի մաս կազմող 18 խումբերն ալ իրենց ձեռնային արձակուրդը կը սկսին (մինչեւ յառաջիկայ 26 Յունուար) կատարելով 18ական մրցում: «Հետեւաբար անոնք այս տարի որեւէ մրցում չունին կատարելիք, բացառելով ձեռնային արձակուրդին աւարտը:

Ստորեւ՝ այս տարուան վերջնական դասաւորումը.

	ԿԵՏ	ՅԱՂԹ.	ՀԱՄ.	ՊԱՐՏ.
1.- Շարլէ	34	10	4	4
2.- Պայէրն Միւնիխ	33	10	4	4
3.- Պորուսիա Տորթմունտ	33	10	3	5
4.- Պայէր Լէւերքուրըն	31	9	4	5
5.- Քայլըրլայտըրըն	30	9	3	6
6.- Հերթա Պերլին	28	9	1	8
7.- Վոլֆսպուրկ	27	7	6	5
8.- Բեօլը	26	7	5	6
9.- Ֆրայպուրկ	24	6	6	6
10.- 1860 Միւնիխ	24	6	6	6
11.- Համպուրկ	21	6	3	9
12.- Հանպա Ռոսթը	21	6	3	9
13.- Վերտըր Պրեմըն	21	5	6	7
14.- Ունթըրհախիւն	21	5	6	7
15.- Այնթրախթ Ֆրանքֆորթ	20	6	2	10
16.- Քոպուս	20	6	2	10
17.- Շթուրթարթ	18	4	6	8
18.- Պոլսուր	18	5	3	10

ՔԱԼԵ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ԱՆՅԵԱԼ ԵՂԱՆԱԿԻ ՊԱՏԿԵՐԸ ԴԱՐՉԵԱԼ ՊԱՐՉԵԼ...

Դ. դասակարգին մաս կազմող Քալէ, որ անցեալ եղանակին մեծ անակնկալ մը ստեղծելով հասած էր Ֆրանսայի ֆուտբոլի բաժակի մրցաշարքին աւարտականին, այս եղանակին Ա. հանգրուանին (որ պիտի սկսի յառաջիկայ շաբաթ) իր դէմ պիտի ունենայ Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան Ա. դասակարգին պարագլուխ Պիտի Պիտըրը գրաւող Սըտանը: Երթի մրցումը տեղի պիտի ունենայ Քալէի դաշտին վրայ:

Ա. դասակարգին մաս կազմող վեց կազմեր, Ա. հանգրուանին պիտի ձակարկեն իրարու դէմ, մինչ մնացեալ խումբերը իրենց դէմ պիտի ունենան Բ., Գ., Դ. եւ ոչ արհեստավարժ խումբեր:

Ստորեւ՝ կարգ մը կարեւորագոյն մրցումներուն յայտագիրը (փակագիծին մէջ նշուած են անոնց որ դասակարգին մաս կազմելը).

- Լիոն (Ա.) - Քան (Բ.)
- Թուրք (Գ.) - Փարիզ Սէն Ժերմէն (Ա.)
- Օքսֆորդ (Ա.) - Լիլ (Ա.)
- Ստրասբուր (Գ.) - Սէնթ Էթիէն (Ա.)
- Վալանս (Գ.) - Մոնպո (Ա.)
- Շաբոբու (Բ.) - Թուլուզ (Ա.)
- Անոնայ (ոչ արհեստավարժ) - Պասթիա (Ա.)
- Իլուար (ոչ արհեստավարժ) - Պորտո (Ա.)
- Տիէփ (ոչ արհեստավարժ) - Մէս (Ա.)
- Փաքի - Սիւր - Էուր (Գ.) - Նանթ (Ա.)
- Լանս (Ա.) - Թրուա (Ա.)
- Նանսի (Բ.) - Սթրասպուրկ (Ա.)
- Ռէնն (Ա.) - Կէնկան (Ա.)
- Թաոն (ոչ արհեստավարժ) - Մարսէյ (Ա.)
- Քալէ (Գ.) - Սըտան (Ա.)

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՇԽԱՐՀԵՆ

Նապահ Պրայըն Ռոյ պիտի լքէ իր ակումբը Հերթա Պերլինը եւ ալ կազմի մը պիտի փոխանցուի, կը յայտնեն գերմանական ակումբին պատասխանատուները:

Անոնք յայտնեցին, թէ 30 տարեկան Ռոյ Գեկտեմբեր 31էն ետք կրնայ միանալ իր նախաիրած կազմին:

Հոյանտացի միջազգային նախկին մարզիկ Ռոյ, որ 1997ին Նոթիկի համ Ֆորթսէն փոխանցուած էր Հերթա Պերլինի ձախող էր հիմնական կազմին երբ անոր կազմը իր միայնակ յաղթանակով յաղթեց Սթրասպուրի Պիլիքըրը:

22 տարեկան Փիլիպ, որ Սիտնի Ողիմպիականի ֆուտբոլի մրցաշարքին ետք (ան իր կազմին հետ հանդիսացած էր երրորդ) վերադարձան յաջողած էր հիմնական կազմին ներս դիրք մը ապահովել, սակայն ապա վիրաւորուած էր:

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԸ...

Շարունակում Ա. ԷջԳ

Նախագահ Լահուտ նկատելի տուաւ, որ այսօր միասնութիւնը որեւէ ատենէ աւելի անհրաժեշտ կը թուի եւ հիմնական, դիմագրաւելու համար Լիբանանի կեցուածքը տկարացնելու փորձերը:

Հանրապետութեան նախագահը նաեւ հաստատեց, որ լիբանանցիք կը զգան տօներու այս պուզադիպութեան նշանակութիւնը, որովհետեւ միասնութեան կրօններու բոլոր հաստատեցաւ լիբանանցիներու համակեցութիւնը օրինակ մըն է, որուն պէտք է հետեւին ուրիշներ:

Այնուհետեւ նախարարաց խորհուրդը քննարկեց Երկրի ընդհանուր վիճակը եւ տեղեկացաւ պաշտպանութեան գերագոյն խորհուրդի քննարկումին մասին, ըսաւ Արիտի:

Այնուհետեւ ժողովը անցաւ օրակարգի քննարկումին եւ վաւերացուց անոր կէտերու մեծ մասը. ըսաւ Արիտի: Այս կէտերէն նշեցք պեղծիքական դրամատունէ մը փոխառութիւն նաւահանգիստի սարքաւորման ֆինանսաւորումին համար, պետութեան անվտանգութեան ուժերու կարգապահական խորհուրդի ստեղծման օրինագիծը, արաբական բարգաւաճման սնտուկէն փոխառութեան առաւելագոյն փոխաւորութիւնը 40էն 80 միլիոն տոլարի բարձրացընելու:

Ժողովը նաեւ որոշեց վճարել ազբերու այրման Պուրճ Համուտի գործարանի կառուցման համար կատարուած իտալական հաստատութեանէ փոխ առնուած գումարը, ինչպէս նաեւ կատարել յատկացում՝ ապահովելու համար 2001 տարուան հացահատիկի կարիքը:

Կառավարութիւնը ընդունեց Սուրիոյ հետ համաձայնուած Թրիփոլի - Ապուտիէ երկաթուղագիծի նորոգութեան ծրագիրը, նախատեսելով որ անիկա երկարի մինչեւ Սուրիա, Իրաք եւ Թուրքիա:

Ժողովը նաեւ որոշեց դրամ «լուսլու» դէմ պայքարի օրինագիծը, զոր պատրաստած է նախորդ նիստին կազմուած նախարարական յանձնախումբը:

Կառավարութիւնը որոշեց 1.8 միլիարդ ռուկի վճարում կատարել «Թէյէ Լիպան»ի, տեղեկատուական եւ ծանուցողական գործունէութիւններու որպէս հատուցում:

Թղթակիցներու հարցումներուն պատասխանելով, Արիտի հաստատեց, որ պաշտպանութեան գերագոյն խորհուրդը կառավարութեան ոչ մէկ փոխանցում կատարելու պարտականութիւն ունի, այլ տարբեր բնոյթի աշխատանք, հետեւաբար նման փոխանցում չէ կատարուած:

Տեղեկատուութեան նախարարը նաեւ ըսաւ, որ անհետացածներու գծով նախապէս տրուած որոշումը (զանոնք մահացած նկատել) վերահաստատուած է, իսկ այս առնչութեամբ երէկւան ժողովին ընթացքին «դիմումներու մարմին»ի կազմութեան նպատակը այս հարցի շահագործումին վերջ դնելն է:

Արիտի նաեւ յիշեցուց պաղեստինցի գաղթականներու բնակեցման առնչութեամբ հանրապետութեան նախագահին, վարչապետին եւ արտաքին գործոց նախարարին աշխատանքները:

ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ԱՇԿԵՐՏՈՒԹԵԱՆ...

Շարունակում Ա. ԷջԳ

Կը փորձէ «քիչ մը ուրախ տրամադրութիւն ստեղծել մեր աշակերտներուն հոգիներէն ու սրտերէն ներս»: Անոնք Քաղաքապետութեան անունով խոստացան յրջութեամբ հետեւիլ աշակերտներուն ապագային, որպէսզի անոնք դառնան հայրենիքին օգտակար տիպար քաղաքացիներ:

Ապա ելոյթ ունեցան մասնակներուն սիրելի տիպարները՝ Միքի Մաուր, Թուրքիին եւ անոնց ընկերները, որոնք երգեցին եւ պարեցին աշակերտներուն հետ:

Տօնակատարութեան ընթացքին ելոյթ ունեցան նաեւ ուրբանական «Քրիսթալ» խումբին յարախաղացները, եւ վերջապէս, ձիակառքով մուտք գործեց կաղանդ Պապան, որ բոլոր աշակերտներուն բաժնեց կաղանդէքեր եւ ուտելիքներ:

Շուրջ երկու ժամ տեսած տօնակատարութեան ընթացքին, հակառակ ցուրտին ու տեղացող անձրեւին, աշակերտները հրճուանքով ապրեցան Պուրճ Համուտի Քաղաքապետութեան կողմէ իրենց տրամադրուած ուրախ պահերը:



Նելլի Վեքիլեան խօսքի պահուն:



Մեթր Ասատ Սալէհ խօսքի պահուն:

ԲԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ...

Շարունակում Ա. ԷջԳ

մը ընթացքին: Ինչպէս են նաեւ քառասուն վիրաւորներ: Իսրայէլեան բանակին մէկ բանբերը յայտնեց, որ մօտաւորապէս երեք հարիւր պաղեստինցի քաղաքայիններ եկած էին դիտելու կողմէր եւ թէ շեղած փամփուշտներ անպայման որ հասած պիտի ըլլային անոնց: Իսկ Նեցարիմ բնակեցման վայրին մօտ, խուլիցայիցի վիրաւորներ սպաննեցին 28 տարեկան Ռիֆաթ Ֆայսալ Ապու Մարպուրը՝ 332ի բարձրացնելով Աքսայի ինթիֆայային զոհերուն թիւը:

Արաֆաթ, որ կը խօսէր Եգիպտոսէն վերադարձին, ըսաւ, որ քափ տալով վայրագութեան, Իսրայէլ կ'ուզէ ամբողջութեամբ կործանել խաղաղութեան գործընթացը:

Եգիպտոսի մէջ Արաֆաթ հանդիպում մը ունեցած էր նախագահ Հիւսնի Մուպարաբի հետ: Տեսակցութեան աւարտին, արտաքին գործոց նախարար Ամր Մուսա ըսաւ, որ երկու ղեկավարները քննարկեցին նորագոյն իրադարձութիւնները եւ յատկապէս ամերիկեան խաղաղարար նախաձեռնութիւնը: Խօսելով Ուաշինկթընի բանակցութիւններուն մասին, Մուսա ըսաւ, որ կարելի է համաձայնութիւն մը գոյացնել յառաջիկայ քանի մը շաբաթներուն ընթացքին, եթէ լուծումի մը յանգեալու քաղաքական կամքն ու բարի կամեցողութիւնը պատրաստ ըլլան:

Մուպարաբ հանդիպում ունեցած էր նաեւ Իսրայէլի Մերեց կուսակցութեան ղեկավար Եոսի Սարիտի հետ, որ ըսաւ, թէ Պարաք ինքնուրուի կամեցողութեան հարցը իրադարձութիւններէն մասին: Սարիտ աւելցուց, որ իսրայէլեան պատուիրակութիւնը ամէն ձեռք ի գործ պէտք է դնէ երաշխաւորելու համար բանակցութիւններուն յաջողութիւնը:

Ուաշինկթընի մէջ ամերիկացի պաշտօնատարներ սկսած են առանձնաբար հանդիպումներ ունենայլու պաղեստինցի ու իսրայէլացի բանագնացներու հետ: Սպիտակ Տան աղբիւրներու համաձայն, պատուիրակները տեսակցութիւն պիտի ունենան նաեւ նախագահ Պիլ Բլինթընի հետ, որ կ'ուզէ Միջին Արեւելքի մէջ նուաճում մը կատարել իր նստաշրջանի աւարտին:

Պաղեստինցի գլխաւոր բանագնաց Սաէպ Արաբաթ ըսաւ, որ մեծ ակնկալութիւններ չունի այս բանակցութիւններէն: Իսրայէլացի գլխաւոր պատուիրակ Ամնոն Շահաբ, իր կարգին դիտել տուաւ, որ թէեւ կը կասկածի, որ բանակցութիւնները արդիւնքի մը հասնին, սակայն կը յուսայ, որ անոնք յառաջիկայ քանի մը շաբաթներուն ընթացքին, եթէ լուծումի մը յանգեալու քաղաքական կամքն ու բարի կամեցողութիւնը պատրաստ ըլլան:

Մուպարաբ ըսաւ, որ Պարաթ ինքնուրուի կամեցողութեան մասին լուր Լիբանոսի թեկնածուն վարչապետական ընտրութիւններուն: Հարցախոյզներուն արդիւնքները կը նախատեսեն, որ առաջին փուլին մասնակցող երեք թեկնածուներէն՝ Փերէս, Շարուն եւ Պարաթ, առաջին երկուքը մնան երկրորդ փուլին ընտրապայքարէն դուրս ձգելով Պարաթը:

Ուաշինկթընի բանակցութիւնները կը դատարարուին Սուրիոյ ու պաղեստինեան արմատական թեւերու կողմէ: Սուրիոյ պաշտպանութեան նախարար Մուսաֆա թլաքնադատեց բանակցութիւնները եւ անգամ մը եւս հաստատեց, որ Գամալնուսի պարտիզ կը կանգնի պաղեստինեան ինթիֆայային:

Ուաշինկթընի բանակցութիւնները կը քննադատեց նաեւ պաղեստինեան Է.Ֆ. Տէ. Էլ. Փէ. արմատական շարժումը, որուն ղեկավար Նայէֆ Հաուսթիէ հանդիպում մը ունեցած էր

(ՌՈՅԹԸՐԸ)

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ...

Շարունակում Ա. ԷջԳ



Հ. Յ. Դ. Սարգսյան պատակումը այցելեցին նաեւ Միջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Միութեան առեւտրային վերապատելի Փոյ Հայտարարեան, հայ կաթողիկէ պատրիարքական փոխանորդ Վարդան Եպ. Ազարեան, զոր Սուրիոյ Խուրի, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիեան, Կեդրոնական Գրամատան փոխ կառավարիչ Յարութիւն Սամուէլեան, Ազգային վիճակագրութեան վարչութեան տնօրէն Մարալ Կիտանեան, Հ. Մ. Լ. Ս. Ի. Լ. Ս. Ի. Համապայմանի Շրջանային վարչութեան ներկայացուցիչներ, թաղապետներ, ինչպէս նաեւ սենտիքաներու եւ միութեանց ներկայացուցիչներ:

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, դրամանիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երկէ կէսօրին.	
Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրօ	0.9093
Ֆրանսական ֆրանք	7.2075
Քանադական տոլար	1.523
Գերմանական մարք	2.149
Չեխոսլովակական ֆլորին	2.4214
Չեխոսլովակական ֆրանք	1.6684
Պոլսական ֆլորին	44.325
Իտալական լիր	2127.54
Ճափոնական եեն	112.63
Տուրքական բլրոն	9.585
Նորվեգական բլրոն	8.9596
Գանիական բլրոն	8.2041
Մեկ սթրլինգ	1.4784

ԽԱՉՔԱՌԻ ԹԻՒ 4745

Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ԸՈՐԻՉՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՇԱՅԵԱՑ
1. Մեր կրցածին չափ:	1. Խմոր շաղելու տաշտ
2. Յոյն զիւր - Աղեկատ	- Մէջը պարպուած եւ
- Նախամար:	չորցուած դղում:
3. Կրկնուած բաղա-	2. Հայրենի մամուլէն -
ձայներ - Շուքի աւանդե-	Հոտաւէտ ուռնի:
րէն:	3. Ալլուրենէն - Գեղը-
4. Կանացի պատուա-	կական տասանորդ կղե-
նուն - Գոյութիւն ունին:	րականներու:
5. Նոյն զիւրերը - Կեցի՛ր	4. Խալիֆայական կու-
- Սուրիական լրատու	սակալ - Գուլպայի ասել:
գործակալութիւն:	5. Հայ զիւրուհի:
6. Թաքէլ:	6. Նուագարանի թել -
7. Ուշանալ - Հարցա-	Յուրբակ, լուսարձակ:
կան դերանուն (Հակ.):	7. Վայրի մանր խնձոր
8. Կրկնուած տառեր -	- Ալլուրենէն:
Խոնաւ:	8. Նապաստակի տե-
9. Գիշերաման - Կշիռ	սակ:
ուներու (Հակ.):	9. Ներկելու գործա-
10. Այեր - Հայաստանի	րան:
լեռներէն - Ճափոնական	10. Իգական անուն -
դասական թատրոն:	Քրիստոս Տոն Հարսնեւոր
11. Ունգ - Տիեզերական	էր:
Ա. Ժողովին գումարման	11. Խիստ, դժնդակ -
վայրը:	Տղայ՛:

ԹԻՒ 4744

ԽԱՉՔԱՌԻ

ԼՈՒԾՈՒՄԸ

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամա-Գիշերու փակման սակագները հետեւեալ-Գներն էին երկ.

Սուրիական թղթուկի	31,50 - 33,50 լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3990,00 - 4010,00 լ.ն.
Քուէյթեան տինար	4886,42 - 4890,42 լ.ն.
Յորդանանեան տինար	2124,24 - 2128,24 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տինար	408,43 - 410,42 լ.ն.
Սեւուական դիալ	399,90 - 401,99 լ.ն.
Օմանեան դիալ	3900,00 - 3930,00 լ.ն.
Քաթարեան դիալ	412,15 - 416,15 լ.ն.
Եգիպտական կիւն	400,72 - 402,72 լ.ն.
Անգլիական սթրլին	2211,99 - 2215,84 լ.ն.
Գերմանական մարք	694,47 - 698,16 լ.ն.
Հոլանտական ֆլորին	615,65 - 619,24 լ.ն.
Ֆրանսական ֆրանք	205,74 - 209,94 լ.ն.
Չեխոսլովակական ֆրանք	895,32 - 899,25 լ.ն.
Պէլձիքական ֆրանք	31,63 - 32,68 լ.ն.
Դանիական բլրոն	230,22 - 250,12 լ.ն.
Սպանական փեյթթա	8,02 - 9,04 լ.ն.
Թրքական լիր	0,0365 - 0,0370 լ.ն.
Կիպրական փաուստ	2375,79 - 2379,33 լ.ն.
Իտալական հալար լիր	700,15 - 702,38 լ.ն.
Ճափոնական հալար եէն	13035 - 13039 լ.ն.
Ամերիկեան հալար ֆրանք	2450 - 2452 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00 լ.ն.
Քանադական տոլար	987,50 - 989,13 լ.ն.
Աւստրալիական տոլար	824,88 - 828,83 լ.ն.
Եւրօ	1361,91 - 1365,93 լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	105,000 - 115,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	92,000 - 102,000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	81,000 - 91,000 լ.ն.
Մեքսիքական փետոս	496,000 - 503,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ	
ձոյլ ոսկի	13,250,000 - 13,750,000 լ.ն.
Մէկ օսու ոսկի	268,05 - 272,40 \$
Մէկ օսու արծաթ	4,59 - 4,63 \$

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիճի Ա. ճշդում	Գիճի Բ. ճշդում	
Ա. կարգի	7 1/8	7 1/4
Բ. կարգի	7 3/8	7 3/8